



(Ը. Տարի) **ՅՈՒՆԿԱՐ 1932**

(8^{me} Année) **Janvier 1932**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԲԱՆԲԵՐ

ԱՌՕՐԵԱՅ ԿԵԱՆՔԻ ԵՕԹԸ ԿԱՆՈՆԵՐ

Հոգ. Կեանք

ՎԵՐԷՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ

ՄՍՈՒՐԻԴ ԴԷՄ ԵՍ ԱԼ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԻՍԻՆԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Ս. Դրական սերտողութիւն

ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՆԶԸ

Կենտագրական

ՕՊԸՐԼԻՆ

Խանկանց սիւնակ

ՍԱՄՈՒԷԼ

ԱՐՅՈՒՄՆԵՐ ՄԱՏԹ. ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Թարգմ. Ն. Մ.

Ազատ Թարգմ. Ն. Մ.

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Բրաթ. Դ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ

X X X

Ազատ Թարգմ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Բրիտանիոյ չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Բրիտանիոյ մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի: Հայերէն եւ թուրքերէն: Իւրաքանչիւրն
ունի իր խմբագրական մարմինը: Երկուքն ալ կը տպուին Մարսէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս):
Անոր պատասխանատու խմբագիրն է՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Մարսէլ

Թուրքերէնը ունի 8 էջ ո՛չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կընայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Բրիտանիոյ:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է
եւ կանխիկ:

— **ԲԱԺՆԵԴԻՆՆ Է** —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 13 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ Եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
թերթիս խմբագրութեան, հետեւեալ կերպով.—


Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արժնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆՔԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ ջրլայ Թէ
Անոր Բանգիտար մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

Հ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ 1952

ԹԻԻ 1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս թիւով «Բանքեր» իր երկրորդ շրջանին մէջ կը մտնէ բոլորովին փոխուած եւ առաջինին կրկին ծաւալովը եւ աւելի: Ընթերցողներէդ շատեր թերթիս առաջին թիւէն իսկ սկսաք հետեւիլ: Տեսաք նաև այն հետզհետեակաւ աճումն ու խորացումը այս անցեալ եօթը տարիներուն մէջ:

«Բանքեր» երբ առաջին անգամ հրատարակեալու ձեռնարկեցինք, չորս էջերէ կը բաղկանար: Երեք էջերը հայերէնի եւ մէկն ալ թուրքերէնի յատկացուցած էինք: Այսպէս կ'ուզէինք շարունակել կրօնական եւ հոգեւոր բաներու ընթերցասիրութիւնը վառ պահելու նպատակաւ: Բայց հազիւ թէ բացառիկ թիւը հրատարակուած էր և առաջին թիւին տպագրութեան կ'սկսէինք, բազմաթիւ նամակներ հասան մեզ, քաջալերելով զմեզ որ կրկնապատկենք գոյն, եթէ չէինք կրնար քառապատկել: Երկրորդ թիւին արդէն այդ փափաքներուն զոհացում տալու հաճելի ստիպողականութեան տակ կը զարնուէինք: Այսպէս շարունակեցինք հինգ տարիներ, մինչեւ որ շատ մը հոգեւորներու դիտողութեանց ալ տեղի տալով քիչ մը աւելի մեծցուցինք, թուրքերէնը (չորս էջով) զատելով հայերէնէն եւ նախկին ութը էջերը միմիայն հայերէնի յատկացնելով: Երկու տարի ալ այս կերպով շարունակելէ յետոյ Տէրոջը առաջնորդութեամբ այս անգամ բոլորովին նոր շրջան մը կ'սկսինք նոր եւ աւելի կատարեալ ծրագրով մը: Անցեալներուն մէջ ունէինք շատ մը ծրագիրներ, գործքք ի գործ դնել անկարելի էր մեզի տեղի անձկութեան պատճառաւ: Այս անգամ տարբեր պիտի ըլլայ եւ ժամանակը ցոյց պիտի տայ թէ մենք իրաւունք ունեցեր ենք:

Թերեւս ընթերցողներէն մին կամ միւսը իր մտքէն անցնէ թէ արդեօք ժամանակն էր որ

մենք «Բանքեր»ը կրկնապատկէինք: Անմիջապէս առանց վարանելու պիտի պատասխանէինք, «Այո», վասնզի դիտէինք թէ մեզի իբր պատճառ պիտի բերէիք քաղաքական ներկայ անկայուն վիճակին բերումով գործադրկութեան ընդհանրացումը եւ ժողովուրդին անգործութիւնն ու աղքատութիւնը: Մենք եւս ձեզի կուգանք ըսելու թէ ճիշդ այդ պէտք է ըլլայ մեզի բաւականաչափ դրդապատճառ որ մենք աւելի հաստատականամբ ու անվհատ, փողը ձեռին կանչենք մարդկութեան թէ, յոյսերնիս մարդոց վրայ դնելու չենք. անիծեալ է այն որ մարդու կ'ապաւինի: Ձեր վստահութիւնը Աստուծմէ մի ձգէք: Թէեւ այսօր ապագան բոլորովին մութ ու անորոշ ալ տեսնուի ձեր առջև: Մենք գիտենք թէ ներկայ աշխարհի մարդիկ որ զԱստուծոյ չեն ճանչնար իր փառքովը, պիտի նուաղին իրենց վախէն եւ աշխարհի վրայ գալու բաներուն սպասելէն (Ղուկ. ԻԱ. 26) ու ճիշդ այդ նուաղման եւ անյուսութեան վայրկեանին խի՛ստ մօտ կը գտնուի Մէկը մեզի, որ կը մխիթարէ եւ իր կատարեալ խաղաղութիւնը կուտայ մեզի: Ու Բանքերի նպատակն է այդ սիրեցեալ Անձին կողմէն աւետել քեզ, «Ո՛վ գործադրկութենէ տառապող, մի՛ վախճար, ահա Տէրոջը ձեռքը փրկելէն չկարճցաւ եւ Անոր ականջը լսելէն չձանրացաւ: Ձենք ըսեր թէ Անիկա անմիջապէս ձեզի գործ պիտի հայթայթէ երբ դուք ազադակէք, հապա ինքը ազատութեան միջոց մը պիտի տայ, ու այդ միջոցը աւելի մնայուն արդիւնքներու պիտի հասցնէ Ձեզ: Ոչ թէ անցաւոր օրական հացի, այլ յաւիտենական կերակուրին, որուն կարօտը կը քաշէ մեր հոգին: Պէտք է որ այդ կենդանի կերակուրէն կերած է, ալ

չնուազիր, ընդհակառակը անոր մէջ կենդանի գորութիւն մը զինքը յաւելրժ կարող կ'ընէ՝ ամէն բանի յաղթելու եւ հաստատ կայնելու: Արդ, զիտնալով թէ այսպիսի ճգնաժամային վայրկեաններ մարդիկը, նոյնիսկ հաւատացեալները յաճախ վարանումի կ'ենթարկեն, կրկին պատահանութիւն համարեցինք մեզի (ու այս իրաւունքով) աւելի լայնօրէն խօսելու մեր հայրենապիտեանքին այն սքանչելի անունին մասին, որ կրնայ տիեզերքը փոխել ինչպէս նաեւ մեր պարագաներն ալ, մեր բերնին մէջ դնելով ուրախութեան նոր երգ մը:

Ամերիկայի մէջ ժիւ գարու սկիզբները պատերազմէն անմիջապէս յետոյ լայնածաւալ գործադրկութիւն մը ծայր տուաւ: Հոգեւոր առաջնորդներ եւ հաւատքի աէր մարդիկ միանալով եկեղեցիները բացին, ի մի հաւաքեցին զործադուրկներ եւ ցոյց տուին անոնց նուազման միակ պատճառը, միշտ, զոր եթէ ձգէին, անշուշտ Տէրը պիտի սղորմէր իրենց: Կը կարծեմ թէ այդ ժողովներէն անմիջապէս յետոյ Տէրը աշխատելու գործ մը չտուաւ անոնց, բայց իրենց սիրտը մաքրեց եւ մաքուր սիրտ մը ամենամեծ հարստութիւնն է աշխարհի: Կը հաւատամ թէ ատկէ վերջ անոնք բոլորովին տարբեր մաքով մը մօտեցան զործադրկութեան հարցին եւ լաւ ելքի մը հանգեցան: Մի՞թէ ժամանակը չէ որ մեր եկեղեցիներն ու մատուռներն ալ ամէն օր բացուէին ուր հարիւրաւոր անգործներ մտնելով Տէրոջը դիմէին եւ Անկէ բժշկուէին: Չա՞րժեք միթէ որ այս ուղղութեամբ ջանքեր ըլլան ամէն կողմ Ամերիկայէն սկսեալ մինչեւ Սուրիա: Միթէ այս ժամանակը Աստուածատուր պատեհութիւն մը չէ՞ Տէրը փնտռելու: Այդ պատեհութեանն ո՞րքան կ'օգտուին եկեղեցիներ եւ անհատներ:

Առաքեալը կ'ըսէ Փիլ. Գ. 1-ի մէջ «նոյն բաները ձեզի գրել ինծի ձանձրութիւն չէ ու ձեզի ապահովութիւն է: Պետրոս առաքեալ ալ Բ. Պետ. Ա. 12-ի մէջ կը յիշէ, «Այս բաները միտքերնիդ ձգելու վրայով զանցառու պիտի չըլլամ»: Մենք եւս անոնց օրինակին հետեւելով մեզի համար նուազեցնող պարտականութիւն կը սեպենք քեզի հանդէպ, սիրելի հոգի, ըսելու թէ «Անկախ է յոգ. նաժիւն ոյժ տուողը...» (Տէրոջը ապաւինողներուն ուժը պիտի նորոգուի): (Եսայ. Խ. 29, 51): «Տղայ էի ու ծերացայ, բայց արդարը անտես եղած չառայ, կամ անոր զաւակը հաց մուրացող» (Մադ. Լէ. 23): «Թէեւ իյնայ, պիտի չկործանի, վասնզի Տէրը անոր ձեռքը կը բռնէ» (Մադ. Լէ. 24):

Այս առիթըրը զրելու պահուն, մեր առջեւ

ունինք թերթիս առաջին տարւան բացառիկ թիւը, որուն մէջ ներկայացուցած էինք մեր նուազատակը: Յրուած հայութեան, մանաւանդ նահատաւա ֆրանսահայութեան Սբ. գրականութիւն մը մատակարարել: Այս եօթը տարիներուն մէջ ըրինք զայն թէ խօսքով եւ թէ գործով: Այդ նպատակէն շեղած չենք, ասոր փառք կուտանք, ընդհակառակը մեր ազգի զաւակներուն հոգիներուն կարօտը կրկին դառնութեամբ կը կրծէ մեր սիրտը, մանաւանդ երբ կը տեսնենք թէ դէպքերը զմեզ աւելի կը մօտեցնեն «այն օրունան», այն «մեծ օրունան», որուն մէջ մեր Տէրը իր փառքովը պիտի յայտնուի իրենները քովն առնելու: Յայնժամ սիրելի ընթերցող, դուն ալ պիտի ըլլա՞ս մէջն այդ խումբին, թէ քու աչքերդ ալ պիտի տեսնեն զԱյն, զոր խոցեցիր: Ոչ, սիրելիս, ոչ, Տէրը զքեզ քու խորհածէդ աւելի՜ բարձր կոչման մը հրաւիրեց, ջանա հաւելի՜ բարձր կոչման մը ըսողը կամքով ու բոլոր ուժով փառէ Ասոր, ու խնդրէ Տէրոջմէն սրբապի Անկա օրէ օր աւելի լուսաւորէ քու ճամբարդ: «Բանբեր» ալ պիտի ջանայ ազգակ մը ըլլալ Տէրոջը այդ փառաւոր գործին մէջ:

ԲԱՆԲԵՐ

Բանբերը բոլորեց ահա եօթ տարի, Ա. Յեցաւ, աւելցաւ այն տարուէ տարի. նորա էջերն էին սկիզբը լոկ չորս բայց հիմա թուրքեր'սով է քսան եւ չորս: Երկնային սուրբ կոչման ջանաց ծառայել, Բանբերայի մը դեր ուզեց կատարել:

Բանբերի սպատակն էր բերել մեզ մի բան, Այն բարի լուրն կենաց յաւիտենական, նոր կեանքէն լուրեր տալ հէք մեղաւորին, Բայց ցոյց տալ նոր քայլեր հաւատացեալին, Երկնային պատգամներ հասցնել շատերուն, Բանբերայ մ'ըլլալ ճշմարիտ եւ արթուն:

Բանբեր, կ'աղօթենք որ չըլլայ խոտորիտ, Աստուածային կոչման դուն միշտ հետեւիս: Նոր գործութիւն հազիր, հոգիներ շահիր, Բաց դռներէն մտիր, հոն սերմ եւ յոյս դիր. Երկնքէն միշտ քեզի նոր սպտգամ վարձք կայ, Բանբերայ դուն ըլլաւ, մինչեւ Տէրը գայ:

Լիօն

Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ԱՌՕՐԵԱՅ ԿԵԱՆՔԻ ԵՕԹԸ ԿԱՆՈՆԵՐ

Այս համառօտ եւ պարզ խօսքերը գրուած են այնպիսի քրիստոնեաներու համար որ գոհ չեն իրենց ներկայ հոգեւոր կեանքէն ու կը բաղձան ապրիլ անգորրութեան եւ խաղաղութեան աւելի օրհնաբեր կեանք մը:

Իմ անձնական փորձառութենէս կ'ուզեմ հետեւեալ եօթը կանոնները թելադրել քրիստոնեայ ընկերներու:

Ա. Ինքզինքդ որոշապէս Աստուծոյ նուիրէ: Հաւ է որ զքի առնես քու այս որոշ գործառնութիւնդ եւ տակը դնես քու ստորագրութիւնդ: Անշուշտ անգամ մը ինքզինքնիս ճշմարտապէս Տէրոջը նուիրելէ վերջ՝ չենք կրնար կրկնել մեր նուիրումը, սակայն կրնանք մեր նուիրման ուխտը նորոգել, զայն քննել, յարմար նկատուած յաւելումներ ընել եւ եթէ մոլորած ենք, Տէրոջմէ թողութիւն խնդրել զինք կողոպտելնուս համար եւ ազաչել որ մեր հոգին իր նախկին գերքին վերադարձնէ: Ի՞նչ քաղցր է «Հոգիս կը նորոգէ» խօսքը: Սիրելի քրիստոնեայ ընթերցող, լսիկ տեղ մը, խաղաղ ժամ մը փնտռէ ե ինքզինքդ Աստուծոյ յանձնէ:

Բ. Աստուծոյ բոլոր թէ գուն յօժար ես որ ինք ամէն բանի յօժարեցնէ զքեզ: Տիկին մը որ իր անձնական կեանքին վերաբերեալ կարգ մը խնդիրներու վրայ իր գերիշխանութիւնը կորսնցնել չէր ուզեր, շատ մը դժուարութիւններու մատնուեցաւ: Անոր բարեկամներէն մին որ զայն նշխիրման լաւագոյն կեանքին առաջնորդելու կը բաղձար, պարտաւ թողութի կտոր մը գրաւ անոր առջին եւ սորիւկց որ զայն ստորագրելով՝ աղօթքով Աստուծոյ տանի: Տիկինը անոր հընազանդելով անմիջապէս թեւակոխեց կատարեալ նուիրման օրհնաբեր կեանքը: Դուն ալ պատրաստ ես այսպէս ընելու: Պատրաստ ես պարտաւ թողութ մը ստորագրելու եւ Աստուծոյ առջեւ դնելու որ Ան լեցնէ զայն Իրեն հաճելի եղածին համեմատ: Եթէ պատրաստ չես, Անկէ խնդրէ որ Ինք զքեզ յօժարեցնէ: Եթէ կ'ուզես երջանիկ ըլլալ, թող որ Յիսուս հսկէ քու վերադ եւ Ինք միայն որոշէ քու բարեկամներդ: Կեանքիդ իշխանութիւնը Անոր յանձնէ: Անիկա ունենալու է իւրաքանչիւր սենեակի, իւրաքանչիւր պահարանի, իւրաքանչիւր դարակի բանալին: Անոր յանձնէ բոլոր բանալիներդ եւ թող որ Անիկա մէն մի ծածուկ տեղ մուտ գտնելով

մաքրէ, նորոգէ եւ գեղեցկացնէ: Յիսուս քեզ ոչ թէ մասնակի, այլ լման կ'ուզէ:

Գ. Ընդունէ թէ Յիսուս Իրեն ինկած բաժինը լիովին պիտի կատարէ: Այն վայրկեանին որ ինքզինքդ Անոր կուտաս, Անիկա քեզ կ'ընգունի: Այն րոպէին որ դուռը կը բանաս, Անիկա ներս կը մտնէ: Ճիշդ այն պահուն որ էութեանդ մարդկային բնական հոսանքները կասեցնել կը փորձես, Անիկա պիտի ողորդէ քեզ Իր զօրութեան եւ ուրախութեան յորդառատ հոսանքներովը: Անիկա Իր գործը մեր մէջ յաջողապէս զուլի պիտի հանէ եւ մեզ անպատճառ մեր արմենաբարձր խոտալին հասցնէ, եթէ Իրեն թոյլ տանք որ անարգել գործէ մեր էութեան ամէն մէկ մասին մէջ:

Դ. Անմիջապէս խոստովանէ մեղքդ: Եթէ թողուս որ չխոստովանուած մեղք մը մնայ սրտիդ վրայ, պիտի կորսնցնես քն խաղաղութիւնը եւ անգորրութիւնդ: Մի՛ սպասեր մինչեւ որ իրիկուն ըլլայ եւ առանձնանալու ժամանակ գտնես, այլ բազմութեան մէջ, ամենազբաղ վայրկեանիդ, մեղքին հետքը տակաւին չաւրուած՝ սիրազ պթառատ Փրկչիդ բարձրացուր եւ ըսէ, «Տէր Յիսուս, ճիշդ հիմա գիտ այս մեղքէն մաքրէ Բու անգին արիւնովդ եւ ես ձիւնէն աւելի ճերմակ պիտի ըլլամ»: Յիսուսի արիւնը արդէն շարունակ կը գործէ մեր մէջ՝ մեզ սրբելով այն մեղքերէն որոնց անգիտակ ենք, սակայն այն րոպէին որ մեր կեանքին մէջ մեղքի մը գիտակից կ'ըլլանք, մեր պարտականութիւնն է անմիջապէս դիմել Անոր մաքրարար պաշտօնին:

Ե. Ամէն փորձութիւն եւ հոգ քնիստոսի յանձնէ: Երբ բնազգաբար կ'զգաս փորձութեան մը քեզի մօտենալը, անմիջապէս սիրազ Գրիստոսի բարձրացուր: Անիկա չկրնար խնդրեք մերժել կամ անտես ընել: Քեզ Իր թեւերուն տակ պիտի առնէ եւ պաշտպանէ: Ու երբ ներութիւն մը կամ հոգ մը քու խաղաղութիւնդ վրդովելու սպառնայ, վայկենաբար Յիսուսի գիրկը նետուէ եւ խնդրէ որ Ինք ազատէ քեզ ամէն ճնշումէ: Թերեւս ծանր հառաչով մը կը խոստովանիս թէ քու ալ փափաքդ է այնպիսի կեանք մը ապրիլ, սակայն ճիշդ պէտք եղած վայրկեանին կը մոռնաս Անոր գիմել: Ուրեմն ինքզինքդ վարժեցուր այն ճշմարտութեան թէ Անիկա քու մէջդ ապրելով զքեզ Իրեն մէջ պիտի պահէ: Առաւօտուն կանուխ քու հոգիդ Անոր պահպանութեան յանձնէ եւ երբ մէկ ժամ միւսին կը յաջորդէ, վստահէ թէ Անիկա պիտի պահէ Իրեն յանձնածդ:

2. Քրիստոսի հետ շփման մէջ գտնուէ ան-
դադար: Հեռու կեցիր ուրիշներու մէջ սխալ
զանկէ, քննադատութենէ եւ սիրոյ հակառակ
որեւէ զգացումէ որ չհամաձայնիր Քրիստոսի
կատարեալ սիրոյն: Գնա միայն հոն ուր կը խոր-
հիս թէ Անիկա կը գտնուի: Հոն ուր Իր զա-
ւակներէն երկու կամ երեք հոգի հաւաքուած
են, կամ հոն ուր մոլորեալ ոչխար մը ման կու-
գայ: Խնդրէ որ քեզ ամէն առաւօտ արթնցնէ
որպէսզի պատեհութիւն ունենաս Իրեն հետ հա-
ղորդակցելու եւ Սուրբ Դիրքդ ուսումնասիրելու:
Ժամանակ գտիր նաեւ օրուան միջոցին, մա-
նաւանդ առօրեայ գործէդ վերջ Անոր հետ ա-
ռանձնանալու, ամէն ինչ Անոր պատմելու եւ
անցեալ ժամերդ Անոր անուշ աչքերէն ցոլացող
մեղմ լոյսին առջեւ տարածելով անգամ մըն ալ
զանոնք քննելու:

Է. Արիւկաւալէ որ Սուրբ Հոգին գործէ քու մէ-
ջդ, քեզի հետ եւ քեզի համար: Երբ մարդ մը
Աստուծոյ հանդէպ շիտակ դիրքի մէջ կը զըտ-
նուի, Աստուած զայն ազատօրէն կը գործածէ:
Անոր մէջ կ'արթննան զգացումներ, յառաջ կու-
գան ներշնչումներ, զօրաւոր մղումներ, բացա-
ռիկ որոշումներ: Այս ամէնը Սուրբ Դիրքով եւ
աղօթքով լաւ մը քննելու է եւ երբ որոշապէս
յայտնի ըլլայ թէ Աստուծոյ Հոգիէն են, հնա-
զանդելու է: Մշտապէս մխիթարութիւն մըն է
թէ երբ Աստուած պատուէր մը կուտայ՝ անոր
հետ կը պարզուէ նաեւ զայն գործադրելու կա-
րողութիւնը: Ամէն անգամ որ մեզի գործ մը կը
յանձնէ, մեզի որոշապէս կը ցուցնէ թէ մ'ըսէ
ինչպէս ընելու ենք եւ մեզի ճիշդ պէտք եղա-
ծին չափ զօրութիւն եւ իմաստութիւն կը շնոր-
հէ: Մի վարանիր այս օրհնաբեր կեանքը թեւա-
կոխելուն վախնալով թէ Աստուած քեզմէ պիտի
ակնկալէ բան մը զոր անկարող ես ընելու: Ա-
նիկա երբեք այդպէս չընէր: Ահա թէ ինչպէս
կը գործէ: Քու սրտիդ վրայ կը գնէ խնդիր մը
որուն անկարող կ'զգաս դիմադրելու եւ երբ աչ-
քերդ Իրեն բարձրացնելով կը բաղձաս պիտի
նալ թէ ինչ կ'ուզէ որ դուն ընես կամ ըսես,
յանկարճ ճամբայ մը կը բացուի եւ դուն զրե-
թէ անպիտակցարար կը խօսիս ու կ'ընես Ա-
նոր ուզածը: Վստահ եղիր թէ Սուրբ Հոգին քու
առջեւէդ երթալով ծուռ տեղերը պիտի շտկէ եւ
խորտուբորտ տեղերը պիտի հարկէ: Դաշտի
շուշաններուն նայէ, ինչպէս կ'աճին: Դուն ալ
բոլոր դժուարութիւններդ հաւատքով միշտ քե-
զի մօտ գտնուող Տէրովդ յանձնէ: Որթին
ճիւղը որեւէ Զանք չթափեր հիւթեղ սղկոյզներ

յառաջ բերելու: Ասոր հակառակը աւելի աշ-
խատանք պիտի պահանջէր:

Մեր նկարագրած այս կեանքին մէջ ան-
յաշողութիւններ պիտի պատահին որոնց, պատ-
ճառը միշտ մեր վրայ պիտի գտնենք եւ ոչ թէ
Աստուծոյ: Արդ, լաւ կ'ըլլայ որ անմիջապէս
գտնենք զանոնք, խոստովանինք եւ վերստա-
նանք մեր նախկին խաղաղութիւնն ու ուրա-
խութիւնը: Ոչխարը չէ որ կը պահէ հովիւը, այլ
հովիւը կը պահէ ոչխարը, զայն կը կերակրէ,
կ'առաջնորդէ եւ կը պառկեցնէ: Ինչէ՛ր չենք
կրնար ակնկալել մեր բարի Հովիւէն: Ո՛վ կը-
նայ նկարագրել այն կանանչ արօտներուն
թարմութիւնը, եւ մշտաբողջ աղբիւրներուն
բերեղեղայ գեղեցկութիւնը որոնց պիտի առաջ-
նորդէ Իրեն վստահող եւ Իրմէ սորվելու պատ-
րաստ հոգիները:

Տէրը թէ քեզի եւ թէ ինծի պարզուէ այս-
պէս հոգի մը, չսիրելի ընթերցող:

Յ. Պ. ՄԱՅԸՐ

ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ՎԵՐԷՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ

Երուսաղէմ քաղաքիս մէջ նստեցէք, մինչեւ
վերէն զօրութիւն առնէք վրանիդ: Ղուկ. ԻԴ. 49

Վերէն զօրութիւն: Ահա Հօրը խոստումը Ան-
տարակոյս Յիսուսի Հայս հրամանը մեծ զարման-
քով եւ անակնկալութեամբ համակեց Իր աշա-
կերտները: Շատ օրեր չանցած անոնք պիտի շմը-
կրտուէին Սուրբ Հոգիով (Գործ. Ա. 5)՝ «Հոգոյն
Սրբոյ ձեռքով վրայ եկած ատենը զօրութիւն պի-
տի առնէք» (Գործ. Ա. 8): Այն հիանալի մխիթա-
րիչը որ աշխարհը պիտի յանդիմանէր մեղքի
համար եւ արդարութեան համար ու դատաստանի
համար, Որ Քրիստոսի հետեւողներուն ամէն բան
պիտի սորվեցնէր, ու ամէն ինչ անոնց միտքը
բերէր, Որ զանոնք ամէն ճշմարտութեան պիտի
առաջնորդէր, պիտի բերէր նաեւ վերէն զօրու-
թիւն: Եւ քանի որ Յիսուս այս խոստումը Իրեննե-

Մեր աշխատակիցներէն մին Հոգեւոր կեանքի
սիւնակին համար մտնաւոր յօգուածաշարք մը պատ-
րաստած է զանազան նիւթերու տակ, «Զօրութեամբ
լեցուած քրիստոնեան՝ գրքէն քաղելով, որոնց ընթեր-
ցումը կը յուսնի թէ մեր Հոգեւոր կեանքին մէջ մեծ
լոյս պիտի տեսնուի:

ԽՄԲ.

բուն ըրած էր, յայտնի է թէ անիկա մեզի համար ալ է:

Վերէն գորութիւնն Արդեօք մեզմէ քանինե՞ր բաց Սուրբ Գիրքով, լուծեամբ, ծնրադրած են Աստուծոյ առջեւ ջանալով հասկնալ թէ ինչ կը նշանակէ ճշմարտապէս գորութեամբ մկրտուիլ:

Վայրկեան մը մտածէ: Արդեօք կեանքիդ մէջ քանի՞ այրերու կամ կիներու հանդիպած ես որոնց մասին կրնաս վկայել թէ անոնք յայտնապէս վերէն գորութիւն ստացած էին: Մարդիկ կը խոնուին, եռանդով կ'ունկնդրեն քարոզիչի մը պատգամին, խորապէս կ'ազդուին, սակայն մէկ երկու ամիս կամ տարի մը վերջը բոցը կը մարի եւ դրեթէ ալլելու չլսուի: Այն անհատին կամ անոր պատգամին մասին:

Թէեւ խիստ հազուադէպ, սակայն կը պատահի նաեւ որ մէկը այնպէս մկրտուի Սուրբ Հոգւոյն կրակովը որ տարիներ անոր կիզիչ ազդեցութենէն մղուած՝ հոս ու հոն պտըտելով այնքան հրապուրիչ կերպով հոչակէ իր Փրկչին սէրը որ հազարաւորներու Աստուծոյ թաղաւորութեանը մէջ փոխադրուելուն պատճառ ըլլայ: Առատ օրհնութիւններ տեղան բոլոր անոր աջակցած տեղերը եւ անոր մահուանէն վերջ իսկ մարդիկ չզաղորին յիշելու անոր մեծութիւնն ու գորութիւնը:

Արդ, ամէն խորհող միտք մասնաւոր ուշադրութիւն պարձնելու է հետեւեալ երկու իրողութեանց:

Ա. 2է թէ միայն ամէն հեղինակութիւն, այլ նաեւ ամէն գորութիւն կամ իշխանութիւն արքունած է Յիսուս Քրիստոսի: Անոր այս գորութիւնը անսահման է, քանզի Անոր մէջ կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը մարմնապէս: Ուշադրաւ իրողութիւն մըն է թէ Աստուած նախ ինքզինքը մարդկութեան յայտնեց իբրեւ Զօրութեան Աստուած եւ յետոյ իբրեւ Սիրոյ Աստուած:

Բ. Աստուած անշուշտ չուզեր որ իր գաւազներէն որեւէ մէկը գորութեան կարօտ ըլլայ: Անիկա բոլորովին անաշտ է: Անիկա չուզեր որ իրեն հետեւողներէն որեւէ մէկը ցած մակարդակի վրայ ապրող, շարունակ փոքր մեղքերէ յաղթուող, երբեք Քրիստոսի համար չվկայող, շարունակ գորութիւն խնդրող, սակայն երբեք վերէն գորութիւն չընդունող տկար քրիստոնեայ մը ըլլայ: Անկարելի է հաւատալ թէ Աստուած կ'ուզէ որ իր գաւազներէն որեւէ մէկը խեղճ ու տկար ըլլայ եւ շարունակ նայի թէ ինչպէս կրնայ օրհնուիլ առանց երբեք օրհնութիւն մը ըլ-

լալ բաղձալու:

Քրիստոսի համար հոգիներ շահելու մէջ հանրածանօթ Աստուծոյ մէկ գործիչը համածոգովի մը միջոցին հարցուց երիտասարդի մը թէ ինք ընդունելու թէ տալու համար եկած էր: Արդեօք համածոգովներու յաճախողներուն մեծամասնութիւնը պիտի չըսէ՞ր թէ ընդունելու համար կ'երթայ: Սխալ չհասկնաք զիս, անշուշտ մենք աւելի ու աւելի ընդունելու կը կարօտինք: Սակայն սրչափ քիչ քրիստոնեաներ տալու կը նուիրեն ինքզինքնին: Տեսնելի եկեղեցին կապուած կ'երևի այսօր որովհետեւ անոր անդամներուն մեծամասնութիւնը աւելի կը նախընտրեն ծառայութիւն ընդունիլ, քան թէ ծառայել. սակայն եթէ անոնց հարցնենք պիտի պնդեն թէ վերէն գորութիւն ստանալու ետեւէ են: Խնդիրը հետեւեալն է.—

Ա. Մենք հիմաւիլի Աստուած մը ունինք որուն կը պատկանի ամէն ոյժ եւ գորութիւն:

Բ. Անոր բաղձանքն է իւրաքանչիւր հուատացեալ մասնակից ընել իր գորութեան:

Գ. Աստուծոյ գաւազները կը տեսնան եւ կ'ազօթեն որպէսզի գորութիւն ստանան:

Եթէ աշակերտները երեք տարի Տէր Յիսուսի ընկերանալէ եւ քառասուն օր յարուցեալ Վարդապետէն սորվելու սրանչելի արտօնութիւնը վայելելէ վերջ կը կարօտէին Սուրբ Հոգիին գորութիւնը ստանալու եւ Անով լուսաւորուելու, սրչափ աւելի մենք կը կարօտինք Անոր:

Անուանական քրիստոնեան Սուրբ Հոգւոյն գորութեան մասին բան մը չգիտեր: Պատահական քրիստոնեան նոյնիսկ միտքէն չանցնէր գորութիւն խնդրել. յաճախ գոհ կ'ըլլայ իր մանկութեան ատեն սորված ազօթքները զոյգ ըսելով կամ Տէրունական աղօթքը կրկնելով: Փոխանակ գորութիւն ստանալու բաղձանքը ունենալու նոյն իսկ կը տարակուսի թէ արդեօք ինք Տէրոջն է թէ ոչ: Անոր բարեկամներն ալ շատ անգամ անտեղեակ են անոր գիրքին: Անիկա իր քրիստոնէութեամբ Աստուծոյ չաջակցիր ոչ ալ Սատանային արգելք կը հանդիսանայ:

Թերեւս չկայ ուրիշ անհատ մը որու մասին այնքան գովեստով խօսուած ըլլայ Սուրբ Գիրքին մէջ սրչափ Ապօղոսի նկատմամբ: Անիկա ճարտասան էր եւ գորաւոր Սուրբ Գիրքերով, Տէրոջը ճամբուն մէջ վարժուած էր եւ ջերմեռանդ հոգի ունենալով կը խօսէր ու կը սորվեցնէր ճշգրտութեամբ Տէրոջը վրայով (Գործ. ԺԸ. 24-26): Այսպիսի մէկը քաղաքը տակն ու վրայ ընելու չէ՞ր: 2է՞ որ արդէն Պօղոս առաքեալ Եփեսոս

այցելելով ճամբան պատրաստած էր անոր համար: Ապագոս միայն քիչ ազդեցութիւն ունեցաւ որովհետեւ անիկա Սուրբ Հոգիին մկրտութիւնը չէր գիտեր այլ միայն Յովհաննէս Մկրտիչին մկրտութիւնը: Սուրբ Գրոց գիտութիւն, ճարտասանութիւն, ջերմեռանդութիւն ոչինչ են առանց վերէն զօրութեան: Անոր մեկնելէն վերջ երբ Պօղոս կրկին Եփեսոս հանդիպեցաւ, տեսաւ անոնց մէջ Սուրբ Հոգիին ներկայութեան ապացոյցին պակասը: Ուրեմն հարցուց, «Երբ հաւատացիք, Սուրբ Հոգին առի՞ք»: Անոնք պատասխանեցին, «Մենք լսած ալ չենք թէ Սուրբ Հոգի կայ»: Անոնք միայն Յովհաննէսի մկրտութիւնով մկրտուած էին: Մենք կը հաւատանք թէ Ապօղոսի նման սքանչելի տաղանդներով օծուած հազարաւոր այրեր եւ կիներ կան, լուրջ, անձնուէր, ջերմեռանդ եւ զօրաւոր Սուրբ Գիրքերով, վառուած Աստուծոյ ծառայելու փափաքով եւ նոյնիսկ ճարտասան, որոնք սակայն իրենց ժրջան աշխատութեան փոխարէն խիստ քիչ արդիւնք կը վայելեն: Արդեօք պատճառը այն չէ՞ որ անոնց փորձառութիւնը աշակերտներուն Պէնտէկոստէէն առաջ ունեցած փորձառութեան կը համապատասխանէ: Աշակերտները Տէրջը դարձած մարդիկ էին, և Անկէ զրկուած քարոզելու եւ հրաշքներ արձեւելու, սակայն զօրութիւն ստացած չէին: Մենք ալ կրնանք դարձի եկած ըլլալ, բայց զօրութենէ զուրկ: Կամ թէ մենք ալ այն դժբաղդներէն ենք որոնց հոգեւոր ուսուցիչը Ապօղոսի նման ճարտասան եւ զօրաւոր է Սուրբ Գիրքերով, սակայն բոլորովին անտեղեակ Սուրբ Հոգիին լեցունութեան: Արդ Աստուծոյ ծրագիրը եւ նպատակն է որ Իրեն հաւատացող ամէն մէկ անհատ վերին զօրութեամբ լեցուի: Անիկա կ'ուզէ որ ամենէն տկար, ամենէն վարանոտ եւ ամենէն անպէտ քրիստոնեան իսկ «Զօրութիւնով հաստատուի Իր Հոգիովը ներսի մարդուն մէջ» (Եփես. Գ. 16): Ոչ, Աստուծոյ ծրագիրը չէ որ դուն եւ ես անզօր քրիստոնեաներ ըլլանք: Սուրբ Հոգիով լեցուած կեանքը միմիայն քիչերու համար վերապահուած առանձնաշնորհ մը չէ, այլ ամենուն համար, նոյն իսկ հեռու եղողներուն:

Ի՞նչ մեծ օրհնութիւն պիտի ըլլար Քրիստոսի եկեղեցիին երբ անգամ մը իւրաքանչիւր հաւատացեալ զարթէր Տէրջը համար անզօր և ապարդիւն ծառայութիւն մատուցանելէ եւ սպասէր մինչեւ որ վերէն զօրութեամբ լեցուէր: Երբ Փրկիչը անտարակոյս մեզի ալ կը պատուիրէ որ սպասենք: Ոչ թէ անզօր սպասենք, այլ դադ-

րինք անկարելին փորձելէ եւ մեր ժամանակին իւրաքանչիւր վայրկեանը տրամադրենք ուսումնասիրելու եւ դորձադրելու այն պայմանները որ անհրաժեշտ են Սուրբ Հոգիին զօրութիւնը ըստանալու: Վերէն զօրութիւն միայն խնդրելով չստացուիր: Պայմաններ, անհրաժեշտ պայմաններ կան կատարելիք:

Ի՞նչ դժբաղդութիւն, երբ հակառակ մեր ջանքերուն մարդիկ իրենց մեղքերուն մէջ կը մեռնին: Աշխարհ սխալ կը հասկնայ Քրիստոսը, քանզի Անիկա Հայտնութիւն մեր մահացու մարմիններուն մէջ: Քրիստոս կ'ակնկալէ որ մեզմով Իր անուընդ փառաւորութիւն, մինչ մենք յաճախ գայթակղութեան քար կ'ըլլանք թէ աշխարհի եւ թէ մեր հաւատակիցներուն՝ որովհետեւ վերէն զօրութեան մասնակից եղած չենք: Այսօր Աստուած չկարօտիր այնքան ներշնչուած առաքեալներու, որքան կենդանի թուղթերու, ճանչցուած եւ կարգացուած ամէն մարդէ: Ծիշդ ինչպէս որ Աստուծոյ խօսքը Սուրբ Հոգիով ներշնչուած է, նոյնպէս ալ կենդանի թուղթը ներշնչուած ըլլալու է Աստուծոյ նոյն Հոգիովը այսօր: Աւետարանին տարածման ամենամեծ արգելքը տկար քրիստոնեան է: Ո՞վ պիտի փափաքէր այդպէս քրիստոնեայ մ'ըլլալ:

Զինաստանցի պարոնի մը հարցուեցաւ թէ Զինաստանի մէջ քրիստոնէութեան տարածման ամենամեծ արգելքը ի՞նչ էր: Անիկա առանց որեւիցէ յապաղման պատասխանեց, «Քրիստոնեան է ամենամեծ արգելքը»: Երբ Կանտիի, որ Սբ. Գիրքի ուսանող մըն է, Հնդկաստանի մէջ բանտարկուած միջոցին հարցուեցաւ թէ ինչո՞ւ Հնդկաստան Յիսուս Քրիստոսը չէր ընդունել, անիկա պատասխանեց, «Որովհետեւ մենք թէպէտեւ կը յարգենք Քրիստոսը, սակայն Անոր անունը դաւանողներուն մէջ չենք տեսներ Անոր հոգին»:

Մեր տկարութիւնը աշխարհի գայթակղութիւն կ'ըլլայ, մինչ Աստուած անդադար կ'սպասէ որ Իր պայմանները կատարելով վերէն զօրութիւն ստանանք:

Մէկ անգամ խօսեցաւ Աստուած, երկու անգամ լսեցի ասիկա թէ զօրութիւնը Աստուծոյ է: Սաղ. ԿԲ. 44:

Ուրեմն Աստուած իմ կողմս, ա՛յո, իմ մէջս ունենալու եմ եւ սրտիս գերիշխանութիւնը Անոր յանձնելու եմ որպէսզի զօրութեամբ լեցուած քրիստոնեայ մը ըլլամ: Իմ փառքս ուրիշի չեմ տար բացազանչող Աստուածը ուրիշի մը չտար նաեւ Իր զօրութիւնը: Զօրութեան Տուիչը իմ մէջս ընդունելով միայն կ'ստանամ եւ զօրութիւն:

«Ամէն իշխանութիւն Խոնի տրուեցաւ», կ'ըսէ Քրիստոս. սակայն Անիկա նաեւ կը յարէ, «Եւ ահա ամէն օր Ես ձեզի հետ եմ»: Տէր Յիսուս որ յաւիտեան կ'ապրի մեզի համար բարեխօսելու, կը բաղձայ որ Քրիստոս հաւատքով ձեր սիրտերուն մէջ բնակի... որպէսզի լցուիք Աստուծոյ ամէն լրութիւնովը: (Եփես. Գ. 17, 19): Ահա ազօթքը զոր Սուրբ Հոգին դրաւ Պօղոս Առաքեալի մտքին մէջ ու շրթունքներուն վրայ եւ Խոնքը Հոգին գիտէ Աստուծոյ միտքը:

Եթէ մենք ալ բացարձակապէս եւ անդադար Սուրբ Հոգիին գերիշխանութեան տակ գտնուինք, անմիջապէս կը լեցուինք վերէն զօրութեամբ:

ՄՍՈՒՐԻԴ ԴԵՄ ԵՍ ԱԼ

Գարեբու աննախնայ խաւարին մէջ ահա, նոր Աստուծոյ մը կը փայլէ, նոր յոյս մը կը ցոլայ... Լուսոյ ալ այդ Աստուծոյ՝ Աստուծոյ աչքերէն քամուած շիթ մ'արցունք է, մարդուն վրայ ա. նորէն:

Գիշեր է... եւ ահա մահացու մոլորութիւն մէջ ուղեցոյց այդ աստղին կենսավառ բոցն անշէջ քոյց կուտայ հանձարեղ աստղաբաշխ մոգերուն ձամբան մեծ խորհուրդին—Մարմնացեալ Աստուծոյն:

Հովիւներն ալ անշուշտ. Խէեւ խեղճ եւ անուս, նոյն աստղով գտան գոմն ուր պառկած էր Յիսուս. եւ այն տեղ տգէտին հետ գիտունն ալ ծունկիդիր, Հաբցուցին, «Ով Աստուած, ե՛րբ այսքան մեծ էիր:

Մտերիդ դէմ ես ալ անոնց հետ ծունկիւրուն, եւ հոգիս, եւ սիրտըս եւ գլուխս աննրկուն վար ծռած՝ անոնց պէս կը կրկնեմ լուռ,

արշիւղ,
—«Մարմնացեալ ով Աստուած, ե՛րբ այսքան մեծ էիր...»:

* * *

Բնութեան մէջ մեզի տուած ես ով Աստուած Ինչ որ Գուն ուն էիր.—այսինքն ամէն բան—

Բայց այս պաղ, այս խաւար մտերին մէջ պառկած

Մանուկով Ինքզինքդ տուած ես անվարան:

Լա Սիօն

ՍԱՄՈՒԷԼ ՊԵՏԻԱՆ

ՊՕԴՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԻՍԻՈՆ. ԳՈՐԾԸ

Ա. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ*

Իր իսկ վկայութիւնով՝ Պօղոս շատ կանուխ նայնիսկ իր «մօրը որովայնէն» Աստուծոյ՝ որոշուած էր՝ Յիսուսը քարոզել հեթանոսներու մէջ (Գաղ. Ա. 15, 16): Ուստի իր մանկութեան օրերէն սկսեալ աստուածային նախախնամութիւնը անոր նոր քայլերը այնպէս ուղղեց, որ անիկա կրցաւ անգիտակցօրէն նախապատրաստուիլ իր ապագայ կոչմանը: Այդ նպատակին ծառայեցին իր փարիսեցի հօր մաքրակրօն ընտանեկան յարկը, հեթանոսական կարեւոր կեդրոններէն մին հանդիսացող հայրենիքը, Տարսոն, և օրինաց մեծահամբաւ վարդապետին՝ Գամաղիէլի «ոտքը մեծնալը»: Այդ նպատակին ծառայեց մանաւանդ իր հրաշալի դարձը, (Տես «Բանբեր» է. Տարի թիւ 5, 6 եւ 8) որու միջոցաւ Պօղոս ամենամեծահասակ քայլը առաւ դէպի իր առաքելական կոչումը: Ուստի Տէրը կրցաւ անոր դարձի ժաման իսկ ըսելու, «Անոր համար քեզի երևցայ, որ քեզ ձեռք առնեմ պաշտօնեայ ու վկայ ընելու այն բաներուն, զորոնք տեսար եւ այն բաներուն, որոնցմով պիտի երեւնամ քեզի, քեզ ազատելով այդ ժողովուրդէն ու հեթանոսներէն, որոնց հիմա քեզ կը զրկեմ» (Գործ. ԻԶ. 16, 17):

Սակայն Պօղոս դարձէն անմիջապէս ետքը չոկտաւ իր միսիոնարական ճամբորդութիւններուն: Անոնց համար դեռ լման զինուած չէր: Անիկա Աստուծոյ ուժովը հիմակուան զործը պիտի ընէր, ուստի պէտք ունէր աւելի խորունկ նախապատրաստութեան քան թէ վերեւ ակնարկուածները: Պօղոս զայն ստացաւ Արաբիոյ, Գամաղիսի ու Երուսաղէմի եւ Կիլիկիոյ մէջ:

1.— Պօղոս Արաբիոյ մէջ: Իր դարձէն կարճ ժամանակ յետոյ՝ Պօղոս Արաբիա առանձնացաւ, (Գաղ. Ա. 16): Հոն՝ անապատային լռութեան մէջ՝ ան երկու, —թերեւս աւելի— տարիներ յատկացուց զխաւարաբար մտածութեան, ազօթքի, եւ Սուրբ Հոգւոյն օժութիւնովը այնքան խորունկ կերպով ճանչցաւ Քրիստոսը, կենդանի Աստուծոյ Որդին, եւ Անոր խաչելութեան ու յարութեան զօրութիւնը, որքան հազիւ ճանչցած էին ամենէն երեւելի առաքեալները: Հաւանաբար հոն

* Ներկայ յօդուածաշարքին համար օգտուած ենք Ա. Շլաթի մեկնութենէն, Ժ. Պ. Մայքրի «Պօղոս» ծառայ ցիտու Քրիստոսիւնէն, Վարնէքի, «Պօղոս» ներկայ միութեան նարութեան լոյսին առջեւ, եւ մանաւանդ Գործք Առաքելցէն ու Պօղոսի Թուղթերէն:

ստացաւ՝ ուղղակի Յիսուսի Հոգիէն՝ իր Աւետարանը, որու համար ինքն անձամբ կ'ըսէ, «Անիկա մարդու բան չէ, որովհետեւ ես ալ մարդէ չառի զանիկա, եւ մէկէն ալ չսորվեցայ, հապա Յիսուս Քրիստոսի յայտնութենէն» Գաղ. Ա. 11, 12: Թէեւ իբր փառիսեցի եւ իբր Գամաղիէի աշակերտը՝ դարձէն առաջ արդէն շատ խորունկ կերպով ուսած էր Հին անտեսութեան ճշմարտութիւնները, բայց դարձեալ Արարիոյ մէջ էր որ նոր ուսումնասիրութեան ենթարկեց զանոնք եւ հոն ընդունած նոր լուսով գտաւ թէ մարգարէութիւններու համաձայն էին Քրիստոսի խոնարհումը եւ փոխանորդական չարչարանքը ու մահը: Գտաւ նաեւ թէ Արրահամի արուած խոստումը Օրէնքէն ու թլփատութենէն առաջ էր և հիմնուած էր ոչ թէ օրէնքին գործերուն՝ հապա հաւատքի վրայ: Ուստի հեթանոսներէն դարձի եկող հաւատացեալներն ալ Արրահամի որդիներ են եւ ժառանգ խոստումներու (Գաղ. Գ. 14-18): Այս վերջին յայտնութեան լոյսին տակ՝ կրցաւ տեսլի լաւ ըմբռնել նաեւ իր սեփական կոչումը, «Բանգի Արրահամի ըստած էր թէ իրմով պիտի օրհնուէին բոլոր ազգերը» Գաղ. Գ. 8: Պօղոս կրնար ատկէ եզրակացնել թէ այդ խոստման իրականացման համար ինք եւ իր նմանները պարտաւորեալ էին Աւետարանը տանիլ հեթանոսներուն:

Սակայն այս ամենէն աւելի կարեւոր էր Պօղոսի արուած սա յայտնութիւնը թէ ինքը, «Քրիստոսի հետ խաչը ելած է, եւ ալ կենդանի է ոչ թէ ինքը, հապա Քրիստոս կենդանի է իր մէջը» Գաղ. Բ. 20:

Այս յայտնութեան լոյսին տակ «Մ'առ առ մաս փշրուեցան Պօղոսի անձնավատահութիւնը եւ փոթորկոտ նկարագիրը... Այլեւս փոխանակ իր անձին տպրելով՝ կը փափաքէր զերին ըլլալ իր փրկութեան համար մեռնող Քրիստոսի, երթալ հոն ուր Ան գինքը կը զրկէր և ընել, ինչ որ Ան իրեն կը հրամայէր, ու ծառայել իբր մէկ գործիքը Անոր կամքին:

«Անգի բոլորիս համար անհրամնշա է Արարիա երթալ եւ այդպիսի դասեր սորվիլ: Մեր Տէրն իսկ անապատը առաջնորդուեցաւ. եւ ամէն անձ որ աշխարհի մէջ մեծ գործի մը կանչուած է, պարտաւորեալ է այս կամ այն կերպով՝ անշքութեան, յուսախաբութեան եւ առանձնութեան անապատէն անցնիլ» (Ֆ. Պ. Մայլը):

Այսպէս դարձի ատեն Պօղոսի ընդունած յայտնութիւնը՝ Արարիոյ առանձնարանին մէջ, աւելի խորացաւ եւ ընդլայնեցաւ եւ զայն աւելի սպառազինեց, նախապատրաստեց իր առաքելա-

կան գործին համար:

2.— Պօղոս Գամաղիոսի եւ Երուսաղէմի մէջ: Պօղոս Արաբիայէն Դամասկոս վերադարձաւ եւ անմիջապէս սկսաւ «Ժողովարաններու մէջ քարոզել Յիսուսը, թէ Անիկա է Աստուծոյ Որդին», եւ իր վկայութիւնով «կը պապանձեցնէր հրեաները» (Գործ. թ. 20, 22): Սակայն անոնք փոխանակ խոնարհելու ճշմարտութեան առջեւ, հակառակեցան ասոր ու ջանացին դաւադրութիւնով սպաննել զայն: Անոնք յաջողեցան նոյն իսկ իրենց կողմը գրաւել Դամասկոսի այդ օրերու կառավարիչը, Փեթրայի Արեւտա Թադաւորին ազգապետը, եւ անոր պահակներուն միջոցաւ Պօղոսի փախուստի ճամբաները գոցել: (Բ. Կորն. ԺԱ. 32, 35): Բայց վերջին ժամուն աշակերտները կրցան զայն զամբիւղով մը պարսպէն վարիչեցնել ու փախցնել:

Պօղոս ատկէ Երուսաղէմ գնաց եւ հոն Բառնաբասի միջնորդութեամբ ընդունուեցաւ առաքելաւորներէն (Գործ. թ. 23-28): 15 օր հիւրն եղաւ Պետրոսի (Գաղ. Ա. 18) եւ անկէ քաղեց զխաւոր տեղեկութիւնները Յիսուսի երկրաւոր կեանքին նկատմամբ: Բայց անկէ չընդունեց նաեւ Աւետարանը, որ ինչպէս վերը տեսանք, իրեն յայտնուած էր ուղղակի Յիսուս Քրիստոսէն:

Երուսաղէմի մէջ ալ Պօղոս իսկոյն սկսաւ նաչեալ Քրիստոսը քարոզել, եւ կը յուսար թէ իր վկայութիւնը շուտով պիտի համոզէր փարիսեցիներէն, զպիւրներէն եւ քահանաներէն շատեր եւ անոնց միջոցաւ ժողովուրդին մեծամասնութիւնը: Թերեւս կը յուսար նոյնիսկ թէ Իսրայէլ պիտի ընդունէր Քրիստոսը եւ դառնար միսիոնարական մեծ ազգը: Ի՞նչ պատճառ ունէին Հրէից առաջնորդները այժմ մերժելու Յիսուսը: 24^ր որ ինքը, Սօղոսը, իրենց բարեկամը, գաղափարակիցը, հայրենի սովորութիւններուն, օրէնքին ու տաճարին անկեղծ պաշտպանը եւ քրիստոնէութեան երբեմնի ռիւսրիմ թշնամին էր, որ հիմա կը վկայէր Յիսուսի փառաւոր յարութիւնը: Կը վկայէր ոչ թէ ուրիշներու խօսքին վրայ յենելով հապա իր մարմնաւոր աչքերով զԱյն տեսած ըլլալով եւ դէմ առ դէմ Անոր հետ խօսած ըլլալով: Կրնա՞յին տարակուսիլ իր անկեղծութեանն ու ճշմարտութեանը: Ի՞նչ առարկութիւն պիտի բերէին իր դէմ: Շատ շատ պիտի ըսէին թէ մարգարէներու դժամ փառաւոր պատկերին բոլորովին հակառակ են նազովրեցիին խոնարհումը, չարչարանքն ու մահը: Բայց Պօղոս կուռ ապացոյցներ ունէր օրէնքէն ու մարգարէներէն թէ պէտք էր Քրիստոսի չարչարուիլ ու մեռնիլ եւ Իր մահովը

քառութեան ու փրկութեան մեծ գործը զլուխ հանել: Ան կրնար ապացուցանել նաեւ թէ մահը վերջակէտ դրած չէ Յիսուսի կեանքին, հապա նա յարութիւն առած է ու այժմ նստած իր երկնաւոր Հօրը աջ կողմը, ուրկէ օր մը դարձեալ պիտի իջնէ աստուածային վեհափառութեամբ (Ա. թեո. Դ. 13), ու «խափանէ ամէն իշխանութիւն, ամէն պետութիւն ու զօրութիւն... եւ բոլոր թշնամիները իր ստերուն տակ» Ա. Կոր. ԺԵ. 25, 26: Կարճ խօսքով Պօղոս կրնար ապացուցանել թէ Յիսուս իր ամբողջական կեանքով կատարումն է օրինաց, մեկնութիւնը զոհերուն ու ծիսակատարութեանց, կատարելութիւնը մարգարէութեանց եւ մարմնացումը Աստուծոյ խոստումներուն:

Այսպէս Պօղոս մեծ յոյսերով ողբերգութեամբ կը քարոզէր Երուսաղէմի մէջ, «եւ հելլէնախօս հրէից դժմ կը խօսէր ու վիճաբանութիւն կ'ընէր» Գործ. Թ. 28, 29: Բայց շատ ճանցած յուսախար եղաւ: Ինչպէս Դամասկոսի, նոյնպէս նաեւ Երուսաղէմի մէջ հրեաները մերժեցին զինքը եւ սկըսան սպառնալ իր կեանքին: Անոնք զայլթակղեցան Պօղոսի Աւետարանէն, քանզի խաչին քարոզութիւնը իրենց կրօնական կեանքին սքանչելութիւնը կը հռչակէր: (Ա. Կոր. Ա. 28):»

Անոնք ինքզինքնին Աստուծոյ թաղաւորութեան արժան կը նկատէին 2 պատճառներով.— նախ, Աբրահամի սերունդ էին, եւ բնականօրէն ժառանգ՝ անոր տրուած աստուածային անխուսափելի խոստումներուն (Դուգ. Գ. 8): Երկրորդ, ունէին օրէնքը, զոր անոնք կը նկատէին իբր միջնորդ իրենց եւ Աստուծոյ միջեւ, իբր ճանապարհ արդարութեան եւ աղբիւր յաւիտեանական կեանքի: Կը խորհէին թէ Աստուած պարտաւորեալ է իրենց օգնելու, զիրենք արդարացնելու եւ սիրելու: Աբրահամի օրէնքին զործերուն սիրոյն համար:

Արդ Պօղոս ասոնց հակառակ՝ կը քարոզէ թէ միայն մարմնով Աբրահամի սերունդ ըլլալը ոնէ արժէք չունի: «Հաւատքէն եղողներն են Աբրահամի որդիները» Գաղ. Գ. 7: Կը քարոզէր թէ, «Աստուծոյ առջեւ մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին զործերովը», քանզի որեւէ մէկը կարող չէ զայն կատարել, հրեան ալ հեթանոսին նման «Մեղք գործած է եւ Աստուծոյ փառքէն պակասած» ու «Անոր առջեւ դատապարտուած» Հռով. Գ. 9-20 եւ Գաղ. Դ. 10, 11: Ուստի փրկուելու համար պէտք է ապաւինի միմիայն Աստուծոյ ձրի շնորհքին եւ հաւատքով ընդունի ինչպէս իբր միակ «Միջնորդ իր եւ Աստուծոյ միջեւ», կամ Պօղոսի խօս-

քով իբր իր «Իմաստութիւնը, արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը» Ա. Կոր. Ա. 30:

Հրեան չկրցաւ ընդունիլ այդ Աւետարանը, քանզի ան կը փշրէր իր պարծանքը, եւ իր կարծեցեալ ժառանգական ու ստացական իրաւունքն ու արժանիքը: Ամէն բնական ու անդարձ մարդու նման՝ հրեային ալ դժուար էր տեսնել թէ անանկ է, արժէք մը չունի: Իրեն կը մնայ մեղապարտի աթոռին վրայ նստիլ եւ Աստուծոյ ողորմութեան ապաւինիլ հաւատքով: Ան ոչ թէ հաւատքէն, հապա որպէս թէ օրէնքին զործերէն ուզեց արդարանալ, ուստի պայթակղութեան վէճին վրայ զլսեցաւ (Հռով. Թ. 52), եւ մերժեց Բրիստոսը, որ այս անգամ իրեն կը քարոզուէր իր ազգին ամենէն հանճարեղ ու սիրազեղ անձնաւորութիւններէն միոյն կողմէն. մարդ մը որ Աստուծոյ Հոգիէն լուսաւորուած՝ ամէն յարմարութիւն ունէր՝ Իսրայէլի փրկութեան ճամբան ցուցնելու:

Իսրայէլի այս ընթացքը մեծ վիշտ պատճառեց Պօղոսի, վիշտ մը որ տարիներու ընթացքին հետզհետէ աւելի խորացաւ եւ անոր աղաղակել տուաւ, «Մեծ արտամութիւն է ինծի եւ իմ սրտիս անպակաս ցաւ, քանզի ես ինքնա կը խնդրէի նզովուած ըլլալ Բրիստոսէ իմ մարմնոյ կողմանէ եղբայրներուս եւ ազգականներուս համար»,

Բայց Տէրը զինքը մխիթարեց՝ Իսրայէլի կողմէն փակուած դռներուն փոխարէն՝ ուրիշ բաց դռներ ցուցնելով: Երբ ինքը տաճարը առանձնացած աղօթք կ'ընէր, — հաւանաբար իր ազգին փրկութեանը համար, — «Մտքի յափշտակութիւն մը» ունեցաւ եւ Բրիստոսը տեսաւ: Անիկա իրեն նախ յայտնեց թէ ի զուր էր Երուսաղէմ մնալը, վկայութիւնը չպիտի ընդունուէր, եւ ապա վճռական կերպով հրամայեց, «Գնա, փախչի եւ քեզ հետաւոր հեթանոսներուն պիտի զրկեմ»:

Պօղոսի համար այս տխուր փորձառութիւնը եւ անոր յաջորդող աստուածային յայտնութիւնը անհրաժեշտ էին, որպէսզի ան ըմբռնէր թէ ինքը կանչուած է իբր առաքեալ հեթանոսներու: Ուստի ինքզինքը նուիրելու է զլիաւորաբար անոնց համար ու Իսրայէլի մէջ գործելու է միայն կողմնակի կերպով: Եթէ ան միայն մասնակի յաջողութիւն մը ունեցած ըլլար Երուսաղէմի մէջ եւ եթէ չլսէր Բրիստոսի վճռական հրամանը, չպիտի կարենար հեթանոսներուն մէջ կատարել այն մեծ ու փառաւոր գործը, որուն համար Տէրը կանչած էր զինքը «իր մօրը սրովայնէն»: Ուժին կէսը հրեաներուն պիտի նուիրէր եւ միւս կէսն ալ հեթանոսներուն եւ երկուքին մէջ ալ

կիսկատար բան մը միայն ըրած պիտի ըլլար:

Ուստի կրնանք ըսել թէ հեթանոսներու մեծ առաքեալին համար՝ երկրորդ կարեւոր նախապատրաստական քայլն էր իր ձախողութիւնը երուսաղէմի մէջ: Ան գեռ երրորդ քայլ մըն ալ առնելու էր ուղղակի միսիոնարական ճամբորդութեանց սկսելէն առաջ: Այդ քայլն առաւ.

3.— Պօղոս կիլիկիոյ մէջ: Աշակերտները երբ տեսան որ Պօղոսի կեանքը վտանգուած է երուսաղէմի մէջ, գայն Տարսոսն զրկերին, (Գործ. թ. 30): Տարսոսը հեթանոսական կեանքի կարեւոր կեդրոններէն մին էր: Պօղոս քանի որ գիտէր թէ ինքը յետոյ հեթանոսներու մէջ պիտի գործէ, այժմ իր ժամանակը յատկացուց լրջօրէն ուսումնասիրելու իր միջավայրը: Հոն ան գտաւ թէ ինչպէս Հոովմայեցիին կը պարծենայ իրեն կարգապահութեան, ճշմարտասիրութեան և անձնուէր հայրենասիրութեան վրայ: Սակայն զրտաւ միեւնոյն տեսն թէ որքա՛ն ահարկու է կըրօնական ու բարոյական անկումը նոյնիսկ այդ քաղաքակիրթ ազգերուն մէջ: Անոնք «Ճշմարտութիւնը անիրաւութեամբ կը բռնեն, զԱստուծոյ ճանչնալով՝ Աստուծոյ պէս չեն փառաւորեր ու շնորհակալ չեն ըլլար», ուստի, «Աստուծոյ ալ թողուցեր է որ կուրնան եւ երկրպագութիւն ընեն մարդու եւ թողուններու ու չորքոտանիներու եւ սողուններու պատկերին»: Կրօնական անկումը պատճառ եղած է նաեւ սոսկալի բարոյական անկման: Այսպէսով խաւարած է իրենց իմացականութիւնը, անասնացած իրենց զգացումը եւ կիրքերու գերութեան տակ ծախուած իրենց կամքը Հոով. Ա. 18-32: Գտաւ նաեւ թէ, հեթանոսներու մէջ որքան խորունկ հառաչ մը կայ դէպի Աստուծոյ և դէպի փրկութիւն:

Այս բոլորը տեսնելով զգաց իր կոչմանը ծանրութիւնն ու վսեմութիւնը եւ ամբողջ էութեամբը նուիրուեցաւ այդ հեթանոսական խաւարին մէջ Քրիստոսի Աւետարանը տանելու եւ անոր լուսովը զփրաղդ մարդիկը կենդանի Աստուծոյ առաջնորդելու:

Ասով լրացաւ Պօղոսի նախապատրաստութիւնը, ուստի Տէրը զինքը կանչեց Անտիօք, ուր նա նախ հեթանոսութենէ դարձի եկող հաւատացեալներու ծառայեց եւ ապա զրկուեցաւ միսիոնարութեան:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Գիրքերու Գիրքը: Կարելի չէ այլապէս որակել սրբազան Մատեանը, երբ կը գիտակցինք անոր նպատակին բնոյթին եւ ծագմանը: Աստուածաշունչը զմեզ ետ կը տանի աշխարհի ու մարդուն սկիզբին, ապա պատմութեան հոսանքն ի վար կ'իջնէ պարզելով մեր ցեղը հետաքրքրող էն կարեւոր խնդիրները. ի վերջոյ, իր մարգարէական հեռապատկերները ընթերցողները կը փոխադրեն յայտնութեանց կատարներուն վրայ: Ս. Գիրքը 66 գիրքերէ բաղկացած է, Հին Կտակարանը կազմող 39 գիրքերը գրեթէ ամբողջովին երբայիւրէնով իսկ Նոր Կտակարանին 27 գիրքերը, Մեծն Աղէքսանդրի յաղթանակներէն ի վեր տիրող, յունարէն լեզուով խմբագրուած են: Գիտական կամ պատմական գիրք մը չէ ան, սակայն այս մարդերուն մէջ իր շօշափած խնդիրները սխալ չեն պարունակել: Յիշենք թէ գիտութիւնը հակառակ իր զարմանալի նուաճումներուն բազմաթիւ կէտերու մէջ իր վերջին խօսքը չէ ըսած եւ միշտ բարելոյցման ենթակայ է: Սակայն ժամանակ մը Ս. Գրոց վերագրուած կարգ մը սխալներ յօգա կը ցնդին հնախօսական, երկրաբանական եւ աստղաբաշխութեան բերած նորանոր լոյսերուն տակ: «Աստուծոյ խօսքը յաւիտեան կը մնայ»:

Աստուծոյ գործ մը ունի մարդոց հետ. դաստիարակութեան եւ փրկագործութեան ծրագիր մը: Մարդիկ այս ծրագրին ծանօթանալու եւ զանոնք իրեն ազատ գործակիցներ ընելու համար, պէտք է որ անոնք ճանչնան Աստուծոյ միտքը ու այս ուղղութեամբ ըրած ջանքերը: Ս. Գիրքը այս յայտնութիւնն է որ կը բերէ:

Աստուծոյ մարդը Իր պատկերին պէս ստեղծելով նպատակ ունէր գայն հասցնելու բարձրագոյն մակարդակին, հաղորդ ընել գայն Իր կեանքին, բնութեան եւ սրբութեան սրբապաշտ մարդը Աստուծոյ մեթոտը դառնայ Անոր յաւիտեական եւ անքննելի սէրը յայտնելու բոլոր արարածներուն: Այս նպատակաւ ալ Ան նախապէս կ'սկսի իր դաստիարակիչ գործին, մարդուն տալով պատուէր մը, որուն նպատակն էր գայն բարոյական կատարեալ ազատութեան հասցնել:

Մարդը իր դաստիարակութեան առաջին փուլին մէջ իսկ ձախողեցաւ ու մեղանչելով իր և իր

սերունդին վրայ հրաւիրեց «Մեղքին վարձքը» եղող դատաւարութիւնը, միեւնոյն ատեն դառնալով մեղքին գերին: Սակայն Աստուած չի լքեց զայն այլ անմիջապէս լծուեցաւ զայն վերականգնելու գործին: Իր դատաւարակիչ գործը փրկագործութեան փոխուցեալ: Զայս գործնականացնելու համար սակայն հարկ էր որ մարդը ճանչնար Աստուծոյ շնորհաց նոր ծրագիրը: Արդ, անկարելի էր ինկած մարդուն իր ներկայ վիճակով թափանցել Աստուծոյ մտքին, ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ է

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

Արդարեւ կայ տիեզերական եւ մնայուն յայտնութիւն մը՝ բնութիւնը: Մարդուն խոհուն ակնարկին առջեւ բնութեան մէջ երեւցող պատճառներն ու արդիւնքները կը պարզեն Արարչին գործութիւնը, իմաստութիւնը ու բարութիւնը (Հոով. Ա. 20): Կայ երկրորդ եւ աւելի պերճախօս յայտնութիւն մ'ալ՝ խղճմտանքը, որ մարդկային սրտին մէջ կը հռչակէ բարոյական օրէնքը, յանդիմանելով չարը եւ քաջալերելով բարին: Արարչին ձայնն է ան սրտին մէջ որ կը յայտնէ Աստուծոյ սրբութիւնը: Ահա թէ ինչո՞ւ կարելի է պնդել թէ Աստուած ոեւէ ատեն «Բնաւ Ինքզինքը առանց վկայութեան թողուցած չէ»:

Ուստի բնութեան գեղեցկութիւնն ու խղճմտանքին ազատարար սուրբ ձայնը, թոյլ կուտան մարդոց նախգգալու, գուշակելու Աստուծոյ կատարելութիւնը եւ կամքին պատուականութիւնը, բայց բաւական չեն մեզի որոշ յայտնելու իր՝ մեր վրայ ունեցած ծրագիրներուն ճշգրիտ մանրամասնութիւնները: Ուրեմն կը կարօտինք աւելի որոշ, նոր եւ բարձրագոյն յայտնութեան: Այս յայտնութիւնը իր բովանդակ փառքին մէջ ի յայտ եկաւ Տէր Յիսուս Բրիտանի կեանքովն ու գործովը: Սակայն երկնառաք Փրկչին ճամբան պատրաստելու համար պէտք եղաւ պատմական երկար շրջաններու, ուր կը գտնենք զԱստուած զբաղած՝ «լեցնելու ձորերն եւ հարթելու լեռները»: Այս է Հին Կտակարանը: Իսկ Փրկչին փառաւորութիւնն յետոյ Աստուծոյ անձը ճանչցնող, գործը բացատրող եւ բերած նոր լուրը տարածող յայտնութեանց շարք մ'ալ կայ որ է նոր կրօնականութիւնը:

Աստուած Աբրահամը դատեց առաւ եւ ազատեց զինք շրջապատող հեթանոս խաւարէն, զայն ընելու համար ճշմարիտ Աստուծոյ վկան: Փրկագործութեան պատմութեան մէջ աւագ կարեւոր

թիւն կը ներկայացնէ այս: Անով էր որ երկրի բոլոր ազգերը օրհնուեցան: Աստուած հոգ տարաւ որ միաստուածութեան պատգամին վկայութիւնը չկտրի անոր սերունդին մէջ. օրհնեց Աբրահամի յաջորդները ի պատասխան անոր հաւատքին եւ հնազանդութեան: Հետզհետէ օրհնեալ սերունդը շրջապատող վտանգները վրիպեցնելու համար Աստուած զայն Քանանէն Եգիպտոս, եւ Եգիպտոսէ դուրս՝ Բանան բերաւ: Անպատին մէջ կը հոգայ իր ժողովուրդը: Իր տուած օրէնքովը բոլորովին նոր ազգ մը կ'ընէ զայն միեւնոյն ատեն զայն սրբացնելով՝ անոնց տուած պաշտամունքովը: Այսպէս Իսրայէլ Աստուծոյ անդրանիկը կ'ըլլայ, իր գիտութեամբ լուսաւորուած առաջին ազգը, որ պարտէր գործակցիլ Եհովային՝ տապալելու համար հեթանոս Բաբելոնները, երկրի վրայ Աստուծոյ գիտութեան եւ փառքին տարածման ախոյեանը ըլլալու: Կարելի է հետեւեալ կէտերու մէջ խտացնել Իսրայէլի պաշտօնը:

- 1.— Տիրող հեթանոսութեան մէջ վկայ մը ըլլալ Աստուծոյ միութեան:
- 2.— Ազգերուն ցուցնել ճշմարիտ եւ միակ Աստուածը պաշտելու մեծ օրհնութիւնը:
- 3.— Ընդունիլ եւ պահել Աստուծոյ յայտնութիւն-պատգամը:
- 4.— Ծնունդ տալ աշխարհի Փրկչին եւ Տէրոջ— Մեսիային:

Զայս լաւագոյնս պարզելու համար Աբրահամ եւ Մովսէս մասնաւոր յայտնութիւններ ընդունեցին, իսկ մարգարէները Աստուծոյ խօսեցան մերթ յանդիմանելու, քաջալերելու կամ առաջնորդելու: Այսպէս էր որ Տէրը 1500 տարիներու յարաճուն յայտնութիւնով կը բանայ իր ծրագրին օրհնալիւ հորիզոնները մինչեւ ծագող Արեգակին երեւնալը: Ապա չորս Աւետարանները մեզի կը բերեն Փրկչին յայտնութիւնը, Գործոց գիրքը կը պատմէ այս յայտնութեան սալաճումը, Թուղթերը կը մեկնեն այդ յայտնութիւնը, իսկ Յայտնութեան գիրքը կը բերէ Աստուծոյ ծրագիրներուն կատարումը:

Թանկագին է այս մեզի նաեւ անոր համար որ հոն կ'երեւի Աստուծոյ եւ մարդուն սեղմ գործակցութիւնը: Ուրիշ կրօնական գիրքեր աստուածային հեղինակութիւն անպայման չեն պահանջեր, բայց կարելի չէ Սբ. Գիրքը շփոթել անոնց հետ: Սբ. Գիրքին հեղինակը Աստուած է: Աստուածաշունչը Աստուծոյ յայտնութիւնն է մարդուն: Այս նպատակաւ նա ձեռք առած է զանազան մարդիկ ու անոնց տուած է գերբնական

յայտնութիւններ որոնք ճշգրիտ արտայայտութիւններն են Աստուծոյ մտքին ու ծրագիրներուն: Աստուած մասնաւոր կերպով հովանի եղած է անոնց վրայ, գրաւելով անոնց համայն էութիւնը, լեցուցած է անոնց սիրտը: Այս մտերիմ, ներքին գիտակից փոխյարաբերութեան մէջ բացած է անոնց անձանութ հորիզոններ եւ այս է որ

ՆԵՐՇՆՁՈՒՄ

կը կոչենք: Այստեղ մարդուն դերը լոկ մեքենական չէ բնաւ, ընդհակառակը Սբ. Հոգւոյն ներգործութիւնը անոնց իւրաքանչիւրին ընդունակութեանց եւ տաղանդին ազդելով իրենց կարողութեանց գէնիթին կը հասցնէ զիրենք: Այս պատճառաւ ալ զանազան գիրքերը միեւնոյն ներշնչումէն բխած ըլլալով հանդերձ, կը պահեն զանազան հեղինակներու տարբեր անհատականութեանց մասնայատուկ հետքերը: Բայց Աստուած հրաշալի ճշգրտութեամբ մը հակած է անոնց արտայայտութեան, իմբացրութեան եղանակին եւ պատգամին ունձեռնմխելի պահուելուն: Ուստի Աստուածաշունչը լիակատար ներշնչման գիրքն է (Ա. Կոր. Բ. 7-13, Բ. Տիմ. Գ. 16, 17, Բ. Պետ. Ա. 21):

Եւ որքան ակներեւ է այս: Հակառակ որ 66 գիրքերու համար շուրջ 1600 տարուայ պէտք եղաւ, ու անոր հեղինակները եղած են տարբեր դասակարգի, միջավայրի եւ դարերու մարդիկ, զազափարի անհերքելի միութիւն մը կայ մէկ ծայրէն միւրը: Մէկ Աստուած, Անոր եւ մարդոց յարաբերութեան մէկ պատահութիւն, անհաւանական սեպուած մարգարէութիւններ, որոնք զրք մը մէջ խտացուելէ յետոյ դարերէ վերջ կ'իրականանան: Մէկ ճշմարտութեան մը շարունակական պարզումը, մէկ փրկագործութեան մը յիշատակումը եւ մէկ կեդրոնական նիւթ մը, Յիսուս Քրիստոսի անձը եւ Անոր մեծ գործը:

Աստուծոյ աբուած գիրքը եւ տեղը նուազ նշանակալից չեն: Ուր որ Աստուած կը յայտնուի, հոն մարդ կը նուազի եւ կանհետի: Ներշնչման գործն է այս, զի մարդ բնականէն հակում չունի ինքզինքն ու իր շահերը նուազեցնելու զԱստուծոյ բարձրացնելու համար, եւ ո՛չ մէկ պատմադիր ազատ է այս թերութենէն: Սակայն Ս. Գիրքը բոլորը Աստուծոյ կուտայ եւ ոչ ինչ մարդուն: Անձնական արժանապատուութիւն, ազգայնական փառասիրութիւն կ'անհետին հոն՝ ուր Աստուած Իր ձայնը կը լսցնէ: Ահա թէ ինչո՞ւ արտակարգ եւ անշոտով հանդար-

տութեամբ մը կը պատմուին նոյնիսկ էն զգայացունց դէպքերը: Եւ որպիսի հաւատարմութեամբ կը յիշատակուին նոյնիսկ մեծամեծներու մեղքերն ու թերութիւնները: Դատաւորը, թագաւորն ու մարգարէն իրենց կարգին կը յիշատակուին ազատ եւ անկեղծ քննադատութիւններով: Աստուած չի վարանիր ի հարկին «խառապարանոց եւ ապստամբ» կոչելու Իր սիրելի ժողովուրդը: Այս համառօտ դիտողութեանց արժէքը լաւ եւս կը հասկցուի երբ Ս. Գիրքը բաղդատենք Յիսուսէ քիչ առաջ երեւան եկող «Անկանոն» գիրքերու հետ, ուր մարդկային միտքն ու հոգին բիւրեղացած են ինքնազոյութեան, ազգայնականութեան եւ այլ ձեւերու տակ:

Ս. Գրոց ներշնչումը անդիմադրելի ազդեցութիւն մը կուտայ Գրքին եւ անտարակոյս հոս պէտք է փնտռել անոր անհատկանալի յաջողութեան գաղտնիքը: Գիրք մը որ թէպէտ ծագումով արեւելեան, տարածուած է բոլոր աշխարհի մէջ, թարգմանուած ըլլալով աւելի քան 1000 լեզուներու եւ գաւառաբարբառներու: Ապա Սբ. Գիրքը

ՅԱՆՔՈՒՂ ԳԻՐԲՆ Է

Ան գիմաղրած է էն ահաւոր թշնամիին, ժամանակին: Դարերը միայն զայն աւելի սիրելի դարձուցած են: Իր ահարկու հակառակորդները յար խորտակուած են անոր յազմական գնացքին առջեւ: Անոր վիհութեան եւ զօրութեան վկայող մտքի եւ սրտի տէր անձինք՝ ստուար բազմութիւն մը կը կաղմեն: Մանաւանդ անհաշուելի են ամէն դարու հաւատացեալներ, որոնք Ս. Մատեանին պատգամէն լսած են Աստուծոյ փնտոող ձայնը, զգացած Անոր սիրոյ սրտին բաբախումը, անոր լուսով տեսած են իրենց ներքին հոգեկան խոցերը, նաեւ գտած են այդ մտերիմ ցաւերուն բալասանը, իրենց մխիթարութիւնը, յոյսը, առաջնորդութիւնը եւ փրկութեան վստահութիւնը: Ահա թէ ինչո՞ւ եկեղեցիին զաւակներէն ոմանք մինչեւ ի մահ պոյգքարած են պաշտպանելու Ս. Գրոց հեղինակութիւնը, ոմանք իրենց կեանքերը սիրայօժար դրած են ապրելու համար անոր պահանջած կեանքը:

Ս. Գիրքը ուրեմն ոչ միայն տիեզերական այլ անհատական պատգամ մը ունի: Ան ոչ միայն Աստուծոյ մեղաւորին հետ ունեցած անցեալ գործունէութեան կոթողն է, այլ նաեւ ներկային եւ ապագային Գիրքն է: Անով Աստուած կը խօսի եւ կը հասնի մեզի, անով զմեզ կը

պատրաստէ գալու փառքին: Կը տեսնենք հոն մեր սիրտն ու վիճակը ու Աստուծոյ ծրագիրը...

«Տէր, որո՞ւ պիտի երթանք, Դուն յաւիտենական կեանքի խօսքեր ունիս»: Ուստի «իմաստութեան եւ յայտնութեան հոգիով» դ բա՛ց, բա՛ց մեր աչքերը որ Քու օրէնքէդ հրաշքներ տեսնենք:

Փարիզ

Չ. Բ. ՊՈԽՏԱՔԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՖՐԵՏԵՐԻՔ ՕՊԸՐԼԻՆ

Քաղուած

Բէօսֆիլոսի «Վեց կենսագրականներ»էն

Միջին Ալգասի, Վօժ լեռնաշղթային մէջ, Շթայնթալ անունով լեռնագաւառ մը կայ: Իր լեռներուն բարձրութիւնը տեղ տեղ կը հասնի մինչեւ 900 մէթրի: Այդ իսկ պատճառաւ Շթայնթալի կլիման խիստ է ու ցուրտ: Չմեռը կ'սկսի ընդհանրապէս Նոյեմբերին եւ կը վերջանայ Մայիսին, երբեմն ալ Յունիսին: Այդ անսպասու կլիման ու ապառաժուտ գետինը մեծ արգելքներ ու դժուարութիւններ կը յարուցանեն երկրագործին ու պարտիզպանին դէմ: Ուստի ընթերցողը զարմանալու չէ, երբ իրեն ըսենք, թէ մինչեւ ԺԲ դարու սկիզբը այդ գաւառի հողէն ինը մասէն եօթը ընդարձակածաւալ անտառներ ու ճահճանք կը ծածկէին եւ միայն երկու մասը արտի, պարտէզի ու մարգագետնի վերածուած էր: Մշակելի հողն ալ շատ քիչ արդիւնք կուտար, վասն զի այն ատեն երկրագործութիւնը դեռ շատ յետամնաց ու երեսէ ձգուած վիճակ մը ունէր:

Կրնանք երեւակայել թէ այդպիսի պայմաններու տակ՝ հոն ապրող ժողովուրդը շատ դժնդակ կեանք մը կ'ապրէր: Կը բնակէր ցախով ծածկուած, ցածլիկ եւ աղատ խրճիթներու մէջ, որոնցմէ ոմանք ծիծիռնակներու բոյնին նման կրթնած էին ապառաժներու կուրծքին, իսկ ուրիշներ կը պահուէին նեղ ձորերու մէջ, մարիներու շուքին տակ: Կը սնանէր պարազային համաձայն մի քանի գետնախնձորով, կամ վայրի տանձով ու խնձորով եւ կամ քիչ մը հացով: Իր մերկութիւնը կը ծածկէր ցնցոտիներով: Արտաքին, նիւթական թշուառութեան հաւասար էր նաեւ իր մտաւորն ու բարոյականը:

Սակայն այսօր Շթայնթալը բոլորովին տարբեր պատկեր մը ունի. հոն՝ ամեն տիղ կը հան-

դիպինք մաքուր, ճաշակաւոր, քարաշէն տուներուն շրջապատուած մրգենիներով: Անարուեստ, բայց եւ այնպէս շատ ընտիր ճամբայ մը կը միացնէ Շթայնթալը արքունական պողոտային. պատերով արդիւնած է պողարներ բուսահողին դէպի ձոր խուժումն ու կորուստը, առուններու եւ զետեղու ընթացքը կանոնաւորուած է, որպէսզի անոնք իրենց վազքին մէջ մինակ օգտակար ծառայութիւն մատուցանեն եւ ոչ թէ առաջուան նման փնասակար ալ: Ծառաստանները զաւարագեղ մարգագետինները եւ պողարներ արտերը՝ վերածած են այս լեռնագաւառը փոքր դրախտի մը: Շթայնթալի այս օրուն բնակիչները նշանաւոր են իրենց մարգասիրութիւնովը, ծառայելու ոգիովը եւ քաղաքավարութիւնովը: Անոնք նաեւ շատ տաք սիրտ մը ունին քրիստոնէական դոթի ու սիրող գործերու համար:

Ազնիւ զգացումներէն ծնած են արտաքին բարիքներ ալ.— առողջութիւն, կարգապահութիւն, ծաղկեալ գիւղատնտեսութիւն են: Եւն:

Այս մեծ փոփոխութիւնը Շթայնթալ կը պարտի Ֆրէտրիք Օպլըրլինի, որուն կենսագրութիւնը պատմել կ'ուզենք «Բանբեր»ի ընթերցողներուն: Անոր խոր ու գործնական քրիստոնէութենէն շատ բան կրնանք սորվիլ:

1. Օպլըրլինի մանկութիւնն ու երիտասարդութիւնը.— Ծնած է 1740ին Շթադպոլերկի մէջ ուր իր հայրը Գէորգ Օպլըրլին իբր ուսուցիչ կը պաշտօնավարէր տեղոյն կիմնադրումի (գօլէճ) մէջ: Թէ՛ ինք եւ թէ՛ իր կինը շատ աստուածավախ մարդիկ էին եւ ամէն ջանք կը թափէին իրենց ինը զաւակներուն ալ քրիստոնէական դաստիարակութիւն մը տալու: Իրիկունը՝ ընթերիքէն յետոյ, մինչ փոքրիկները պատկերներ կամ քարտէսներ գծելու կը զբաղէին, մայրը անոնց կը կարգար օգտակար զրքեր: Ասով կը կազմուէր ընտանեկան ջեքմ մթնոլորտ մը, որուն մէջ ամէն անձ ինքզինք շատ երջանիկ կը զգար:

Ընտանեկան պարզ ու սրտաբուխ աղօթքը եւ ծնողաց օրինակը փոքրիկ Ֆրէտրիք Օպլըրլինի կրօնական խոր ազդեցութիւն ձգեցին: Ուստի կանուխ հասակէն անոր որդեգրած առածն էր, «Աստուծոյ վախցիր ու Անոր առջեւ քալէ»: Հետեւեալ դէպքերը կը ցուցնեն թէ նա կ'ապրէր նաեւ այդ սկզբունքին համաձայն.—

ա) Իրենք բազմանդամ ընտանիք մըն էին. ինը մանուկներ ու ծնողք. հօրը ամսականը կարճ կուգար, շատ անգամ չէր գիտեր թէ ուրկէ դուրսմ ճարելու էր՝ այս կամ այն հաշիւը փակելու: Պղտիկ Ֆրէտրիք նշմարած էր զայս, ուստի շատ

մեծ խնայողութեամբ կը պահէր այն փոքր գումարները, զորս նա իր ծնողքէն, ազգականներէն եւ ծանօթներէն կ'ստանար անուշեղէն կամ խաղալիք վնեկու համար: Երբ ահսնէր թէ հայրը դրամական անձկութեան մէջ էր, կը վազէր կը բերէր իր փոքր դրամաքղը եւ մէջի բոլոր դրամը հօրը ձեռքը կը լեցնէր: Հայրը յաճախ շնորհակալութեամբ կ'ընդունէր այդ սուերը՝ զանոնք նկատելով որդիական երախտագիտութեան մեծ զոհ մը:

բ) Օր մը 12 տարեկան Ֆրետերիքը տեսաւ շուկայէն անցնելու ատեն՝ որ չարաճճի տղաք վար ձգեցին զեղջիկուհւոյ մը գլխուն վրայի կողովը, որ հաւկիթներով լեցուն էր: Կինը շատ բարկացաւ տեսնելով որ բոլոր հաւկիթները կտորած են: Ֆրետերիք նախ յանդիմանեց չարաճճիները եւ ապա խնդրեց կնոջմէն պահիկ մը սպասել: Մի քանի վայրկեան աներեւութանալէ յետոյ՝ ետ եկաւ իր լեցուն դրամաքղովը, անոր պարունակութիւնը թափեց ապշահար զեղջիկուհւոյն գիւղը եւ անմիջապէս անցաւ զնաց՝ առանց ժամանակ տալու որ կինը իր շնորհակալութիւնը յայտնէ:

գ) Ուրիշ օր մը Ֆրետերիք տեսաւ որ ոստիկան մը անպիթօրէն կը ձեռնէր հաշմանդամ մը, որ անցորդներէն դրամ մուրացած էր: Անպետական քաջութեամբ Ֆրետերիք ոստիկանին դէմը անցաւ եւ լրջօրէն երեսին զարկաւ անոր անգրութիւնը: Ոստիկանը զրգուտած ուղեց տղան ձեռքը: Սակայն դրացիները որոնք ագնուստիք տղան կը ճանչնային ու կը սիրէին, միջամտեցին ու ազատեցին թէ՛ Ֆրետերիքը եւ թէ՛ հաշմանդամը: Քանի մը օր ետքը Ֆրետերիք հանդիպեցաւ նոյն ոստիկանին՝ նեղ փողոցի մը մէջ. նախ՝ վայրկեան մը փախչելու վրայ մտածեց, սակայն յետոյ, «Ո՛չ, ես գէշ բան մը ըրած չեմ: Աստուած իմ հետս է, զիս պիտի պաշտպանէ», ըսելով, խիզախ ու հանդարտ քայլերով շարունակեց իր ճամբան: Ոստիկանը ժպտով դիտեց քաջ տղան եւ թողուց զայն անվրդով անցնելու իր քովէն:

Ֆրետերիք Օպլըրին քաջ ու ագնուստիքաւ ըլլալուն նման, շատ ուսումնասէն ու աշխատասէր ուսանող մըն ալ էր: Կիմնագիտութի մէջ աշակերտ եղած ատեն կը հետեւէր, «Ժամը առաւօտեան՝ ոսկի ունի իր բերան», առածին եւ շատ կանուխ կ'ելլէր իր դասերը սերտելու: Ուստի կըրցաւ շուտով այդ գոյրօցի դասընթացքն աւարտել ու իր 15 տարեկան հասակին մէջ մտնել Շթրազպուրկի համալսարանը եւ ամբողջ

սրտովը նուիրուիլ աստուածաբանական ճիւղին: Սակայն մեծ հետաքրքրութեամբ հետեցաւ նաեւ լեզուներու, պատմութեան, թուաբանութեան եւ բնական գիտութեան: Ուսանողական ծանր պարտականութեանց կատարման ատեն իր մեծ օգնականն էր եռանդուն աղօթքը, որու միջոցաւ անիկա վերէն միշտ նոր ոյժ կը ստանար:

1760 ին իր ուսանողական շրջանը լրացնելէ յետոյ՝ նախ երկու տարի անհատական դասաւանդութիւնով զբաղեցաւ: Ապա Շթրազպուրկի մէջ ուսուցիչ կարգուեցաւ նշանաւոր բժիշկի մը գաւակներուն: Բժիշկը կը յարգուէր ո՛չ միայն իր արուեստին մէջ ունեցած մեծ հմտութեան ու փորձառութեանը՝ հապա նաեւ իր քրիստոնէական անկեղծ ու անձնուէր հաւատքին համար:

Օպլըրին այդ բժիշկին տան մէջ մէկ կողմէն իր ուսուցչական գործին պարապեցաւ, իսկ միւս կողմէն պարապոյ ժամերը յաւակացուց՝ բժշկական անհրաժեշտ գիտելիքները եւ վարժութիւնները ձեռք ձգելու, քանզի ինքը արդէն այդ ատեն որոշած էր՝ յետոյ իբրեւ պատուելի ծառայել գիւղերու մէջ, ուր դեռ բժիշկներ բնաւ զոյլութիւն չունէին. ուստի ինքը գիւղացիներուն մեծ ծառայութիւն պիտի կրնար մատուցանել, եթէ բժշկական զոնէ մի քանի ծանօթութիւններ ունենար:

Բժիշկին տան մէջ Օպլըրին երեք տարի մընաց: Ետքը սենեակ մը վարձեց ու սկսաւ ինքնաշխատութեամբ իբր հովուական պաշտօնին պատրաստուիլ: Այդ տարին կորսնցուց իր սիրելի եղբայրներէն մէկը, որուն մահը իր վրայ այնքան խորունկ ազդեց, որ ատկէ ետքը ինքն ալ կը փափաքէր մեռնիլ ու Բրիտանիա հետ միանալ: 25-ր իւրիկներ իր ծնողքէն ու միւս սիրելիներէն բաժանումի դառնութեանը մասին, քանզի մահը իրեն համար բաժանում չէր թուէր:

ՄԱՆԿԱՆՑ ՄԻՒՆԱԿ

ՍԱՄՈՒԷԼ

ՆԱԽԱԲԱՆ

Այս անկատար սերտողութիւնով Սամուէլի ջէ որ կ'ուզեմ առաջնորդել ձեզ, հապա Անոր՝ որուն գալուստը բոլոր մարգարէները աւետեցին, այսինքն ցիսուս Բրիտանիա:

Վ. Ս.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

(Կարդալ Ա. Թադ. 1. 1-8)

Սամուէլ մեզի ներկայացուած է Ս. Գրքին կողմէ՝ որպէս մարգարէութեան սկզբնաւորութիւնը: Այսպէս կ'արտայայտուի Պետրոս իր քարոզին մէջ ի ծնէ կաղը բժշկելէ յետոյ, «Բոլոր մարգարէները», կ'ըսէ նա, «Որոնք Սամուէլէ ի վեր խօսեցան, այս օրերուն համար ալ իմացուցին»: Գործ. 3. 24: Մովսէսէ ետք (Բ. Օրին. 18. 18) Սամուէլ առաջինը եղաւ այս օրերը իմացնող:

Սամուէլի ասլորած շրջանը դատաւորներէն թագաւորներու շրջանին փոխանցում մըն է: Այս դարափոխումի գործին մէջ նա աննման տաղանդ ցոյց տուաւ: Կը տեսնենք որ նա անդադար տարիներէ ի վեր դադրած աստուածային յայտնութիւնները ժողովուրդին կը ներկայացնէ: Իր հայրենիքը Զախալսող թշնամիները անկարողութեան կը մատնէ: Կը տեսնենք թէ նա դատաւորութիւն կ'ընէ (2 ցեղերուն աշխարհի հաւատարմութեամբ եւ անկողմնակալութեամբ, որուն համար օր մը զմայլելի վկայութիւն մը ընդունեց: Թագաւորը կ'օծէ ու կը հաստատէ, քանզի ժողովուրդը զայն իր ձեռքէն ընդունիլ ուզեց: Սամուէլ ամենէն ժողովուրդային անձերէն մին եղաւ: Երբ մէկը կ'ուզէ հոգեւոր բացառիկ շերմեռանդութեան ժամանակի մը նկարագրութիւնը ընել՝ զայն Սամուէլի ժամանակին կը բաղդատէ: Մընացորդաց գրքին հեղինակը, Յովսիա թագաւորին ըրած Զատիկին մասին գրելու ատեն կ'ըսէ, «Սամուէլ մարգարէին օրերէն ի վեր Իսրայէլի մէջ ասոր պէս Զատիկ մը չեղաւ» Բ. Մնաց. 35. 18: Երբ մէկը մասնաւորապէս զօրեղ եւ անդիմադրելի աղօթողի տիպար մը կը փնտռէ, կ'ըսէ, «Սամուէլ Եհովայի անունը կանչողներուն մէջ էր» Սադ. 99. 6: Երեմիա մարգարէն իր ժողովուրդին վիճակը յուսահատ կը ներկայացնէ, քանզի նոյնիսկ Մովսէսի եւ Սամուէլի աղօթքները կարող պիտի չըլլային գիրենք փրկել: (Երեմ. 15. 1): Նոյն Գործք Առաքելոց գիրքը, որուն մէջ Սամուէլը իբր մարգարէներէն առաջինը յիշուած տեսանք, զայն մեզի կը ներկայացնէ իբր դատաւորներէն վերջինը (Գործ. 13. 20), եւ Երբայացւոց թուղթը զայն կը յիշէ Դաւիթի քով հաւատքի հերոսներուն թուոյն մէջ:

Անգլիացի աստուածաբան մը կ'ըսէ, «Անոր մանկութեան կատարեալ գեղեցկութիւնը, անոր կառավարելու կրթութիւնը ու իմաստութիւնը, խոնարհ արժանապատուութիւնը որով նա իր ժողովուրդին պահանջմունքներուն տեղի կուտայ,

և կը խոնարհի այն բանին առջեւ որուն նա համոզուած էր թէ Աստուծոյ կամքն է. իր անձնական զգացումներուն եւ իր ամենասիրելի համոզումներուն հակառակ եղող նոր վարչութեան մը առջեւ ցոյց տրուած համակերպութեան. ինքզինքը մոռնալու մէջ ցուցուցած իր փութկոտ յօժարութիւնը, անոր տաք սէրը երիտասարդ թագաւորին վրայ որ կուգայ ժողովուրդային յարգ ու պատուոյն մէջ իր իսկ տեղը բռնել. խորունկ ցաւը ի տես այդ երիտասարդին կրկնակի անկողմնորուն. Սաւուղի անկումը իբր վճռական ընդունելով անոր յաջորդը օծելէ առաջ իրեն ցոյց տրուած երկար դիմադրութիւնը: Բոլոր այս յատկութիւնները կը միանան մեզի գծելու արտասովոր հրապուրով եւ գեղեցկութեամբ պատկեր մը»:

Սամուէլի կեանքը բնական կերպով երեք գլխաւոր մասերու կը բաժնուի. — ա) Մանկութիւն եւ երիտասարդութիւն, Ա. Թադ. 1. 3-19: բ) Իբր մարգարէ և իբր դատաւոր անոր գործունէութիւնը, 3. 20-8. 17: գ) Գործէ քաշուիլն ու ձերութիւնը:

Արիւմաթեմ Սօփիմի պղտիկ քաղաքին մէջ կ'ապրէին ընտանիք մը, որուն ներքին կեանքը այժմ նախանձելի չէ՝ հակառակ ընտանիքին՝ հօր Նդկանայի աստուածավախ ըլլալուն: Ծագումով Ղեւտացի, նա ջերմ կրօնասիրութեամբ փարած էր Եհովայի պաշտամունքին: Անոր կինը Աննա տիպար մըն է քաղցրութեան եւ խոնարհութեան, ինչպէս նաեւ հաւատքի: Բայց անգլաւ կին մըն է: Այս ցաւը որ մասնաւորապէս զգալի էր հրեայ կնոջ մը համար, քանզի նէ իբր Աստուծոյ պատիժը կը նկատէր զայս: Նդկանա ուրիշ կին մըն ալ ունէր, Փենանա, որ գաւակներու մայր էր: Մեծ առաւելութիւն, որով նա պարծենալու ոչ մէկ առիթ չէր փախցնէր: Անիկա Աննան տառապեցնելու համար խիստ կը վշտացնէր: Կ'ուզէր անշուշտ զայն բարկացնելով իր Աստուծոյն դէմ՝ զանգատի մղել: «Եւ» կը շարունակէ Ս. Գրոց պատմութիւնը, «Տարուէ տարի նոյնպէս կը վշտացնէր»: Թերեւս լսած էք այն զարմանալի միջոցը, որ Լիզուրկոս կը գործածէր սպարտացի երիտասարդները խմիչքէ զոռւացնելու համար. հրաման ըրաւ որ անոնց ցուցնեն արբած գերիները: 25^օ կարծեր թէ Աստուած երբեմն այսպիսի մեջոցներ կը գործածէ Իսրայէլի մէջէն արմատախիլ ընելու կարգ մը սովորութիւնները գործնք օրէնքը մինակ չէր կրնար ջնջել այս զգայասէր ժողովուրդէն: Այսպէս էր բազմակնութիւնը: Ճիշդ է թէ Մովսէսի օրէնքը զայս արգելող որեւէ խօսք չպարունակէր, բայց

այս չնշանակեր թէ՛ զայն կը քաշալերէ: Ա՛հ, կարգացէ՛ք խնդրեմ Յակոբի եւ իր տանը պատմութիւնը որ շարունակ տակն ու վրայ է Ռաքելի եւ Լիայի կոխներով: Կարգացէ՛ք պատմութիւնը այս իւեղճ Եղիանայի, որ ստիպուած է անկարող ականատեսն ըլլալ շարունակական կոխի մը: Տեսէ՛ք թէ՛ ինչպէս իր երկրպագութիւնները կը խանգարուին, իր աղօթքները կը սրբապղծուին, իր ողջակէզները ու կերակուրները արցունքով կը թրջուին, որովհետեւ Փենանա մասնաւոր խնամքով միշտ այսպիսի ժամեր կ'ընտրէր իր չար լեզուին ընթացք տալու: Կը խորհիմ թէ այսպիսի պատկերներ աւելի գործ տեսած են բազմակնութիւնը վերցնելու, քան որ պիտի ընէին շատ մը օրէնսդրական վճիռներ:

(Շար.)

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԷՆ

(Մանկանց՝ 15 տարեկանէն վար եղող)

- 1.—Բա՛նի անգամ եւ ի՞նչ պարագաներու տակ երկինքէն ձայն եկաւ Յիսուսի համար:
- 2.—Մատթէոսի արհեստը ի՞նչ էր Յիսուսի աշակերտ չեղած:
- 3.—Որո՞նք են այն 5 կիները որոնց անունները Յիսուսի ազգաբանութեան մէջ յիշուած են:
- 4.—Աստուած Յովսէփի ի՞նչ միջոցով խօսեցաւ, քա՛նի անգամ, ի՞նչ պատճառներով:
- 5.—Յիսուս քա՛նի անգամ, որո՞նց, եւ ի՞նչու ըսաւ, «Ետիս գնա, Սառայնայ»:
- 6.—Ի՞նչ էր այն կարճ քարոզը որ թէ՛ Յովհաննէս Մկրտիչ եւ թէ՛ Յիսուս խօսեցան: Ո՛ւր:
- 7.—Ո՞րն է, Մանուկներու գլուխը, Յարութեան, 10 կոյսերու, Մոզերու, Չարչարանքի եւ խաչի, Քրիստոսի երկրորդ գալստեան, Վայելու, Լերան վրայի քարոզի գլուխները, Առաքեալներու, Յովհաննէս Մկրտիչի գլուխները, Ծաղկազարդի, Այլակերպութեան, Յիսուսի փորձուելուն, Յիսուսի ազգաբանութեան, Բժշկութեանց եւ Առաքեալները զըրկելուն գլուխները:
- 8.—Ո՛ւր կը գտնուի, «Միայն Յիսուս» բառերը:
- 9.—Գտի՛ր այն տեղերը որոնց մէջ Պետրոս խնդրոյ առարկայ կ'ըլլայ կամ խօսք կ'առնէ:
- 10.—Յիսուս ե՛րբ, Մատ. 16. 24-ը գործնականապէս կատարեց, քանի որ այդ խօսքը ըսած ալ չէր:
- 11.—Հին Կտակարանի անձնաւորութիւններէն որո՞նց անունները յիշուած են Մատթէոսի Ա-

ւետարանին մէջ, Բ, գլուխէն սկսեալ:

- 12.—Ո՞րոնք են այն երկու կիները, որոնցմէ մին Յովհ Մկրտիչին մահը ուզեց, իսկ միւսը ջանաց Յիսուսը մահէն ազատել:
- 13.—Յիսուսի քա՛նի օր ծոմ պահելը յիշուած է:
- 14.—Ո՞վ էր այն մարդը որ Յիսուսի ժամանակ կ'ապրէր ու Յիսուս անոր տեղը խաչուեցաւ:
- 15.—Աստղը մոզերուն քա՛նի անգամ եւ ո՞ւր երեցաւ: Թուոց զրքին մէջ այս աստղին վերայ եղած մարգարէութիւնը գտի՛ր:
- 16.—Յիսուս ո՞րոնց կողմէ առաջին անգամ, եւ ո՞րուն կողմէ վերջին անգամ թագաւոր կոչուեցաւ:
- 17.—Փարիսեցիներէն եւ Սադուկեցիներէն շատերը ի՞նչ նպատակաւ Յովհ. Մկրտիչէ մկրտուիլ կ'ուզէին, ինչո՞ւ Յովհ. յանդիմանեց զանոնք:
- 18.—Յիչէ՛ 60է աւելի զոյականներ գործնք Յիսուս իր լերան վրայի քարոզին մէջ յիշեց (մարդու, անասունի եւ առարկայի անուններ) օրինակ. զոգեր, գայլ, լոյս, հագուստ են. (Մատ. 5, 6, 7 գլուխներէն):
- 19.—Ո՞րն է այն աղօթքը որուն մէջ Յիսուս Մատթ. 6. 33-ը գործնականացուց:
- 20.—Ի՞նչէն պիտեա թէ Պետրոս ամուսնացած էր:
- 21.—Մատթ. 12. 43-45ի մէջ գտի՛ր այն բառը որ երկու կողմէն ալ նոյնը կը կարգացուի, եւ այն մարդուն կրկին դեւերու բոյն դառնալուն պատճառ կը ցուցնէ:
- 22.—Գտի՛ր այն տասը տեղերը որոնց մէջ «Հաց» կամ նկանակ բառը յիշուած է, իւրաքանչիւրը ի՞նչ պարագայի տակ:
- 23.—Գտի՛ր այն երկու տեղերը երբ Յիսուսէ նշան ուզեցին եւ Յիսուս զրեթէ նոյն պատասխանը տուաւ. որո՞նք հարցուցին ամէն անգամին:
- 24.—Երկինքի թագաւորութեան առաւելներէն քա՛նի հատը եւ ո՞րմէկերը մէյմէկ համարի մէջ սեղմուած են:
- 25.—Յիսուս ո՞ր կնոջ եւ ի՞նչու ըսաւ, «Ով կին քու հաւատքդ մեծ է»: Ո՛ւր կը գտնուի:

ԿԱՐԵՒՈՐ

.....

Կը խնդրուի սիրելի ընթերցողներէն մասնաւորապէս ուշադրութեան առնել Թերթիս կողքին 4-րդ էջին դիտողութիւնը:

.....